ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

23 ապրիլի 2019 թվական

2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԲԱՆԱՎՈՐ ՀԱՐՑԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԻ

ՄՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ժամը 16.40

Հայկ Մարության

-Ավագանու հարգելի անդամնե՛ր, հարց ու պատասխանի համար գրանցվել են ավագանու 24 անդամ՝

Արման Անտոնյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Անի Խաչատրյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Հռիփսիմե Առաքելյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Արմեն Ղալեչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Լիլիթ Կիրակոսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Դավիթ Խաժակյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Լյուդմիլա Սարգսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Սաթենիկ Մկրտչյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Թեհմինա Վարդանյան՝ ԼՈՒՅՍ խմբակցություն,

Միքայել Մանրիկյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լիլիթ Պիպոյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մարկոս Հարությունյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Նուարդ Վարդանյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արմեն Ներսիսյան՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցություն,

Լևոն Զաքարյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արսեն Կարապետյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Մեսրոպ Պապիկյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գայանե Մելքոմ Մելքոմյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Հայկ Հովհաննիսյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Էռնեստ Ավանեսով՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Գրիգոր Երիցյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Վահե Գևորգյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Արուսյակ Հարությունյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Տիգրան Գալստյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն,

Սուրեն Էյրամջյան՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցություն:

Առաջին հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արման Անտոնյան, խնդրե՛մ:

Արման Անտոնյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, ավագանու հարգելի անդամներ, հարգելի գործընկերներ, հարցս վերաբերում է Արցախի փողոցի վթարային շենքերին: Խնդրում եմ մանրամասն և հանգամանալից ներկայացնել այս գործընթացի մասին, քանի որ բնակիչների մի մասը հանդես է գալիս որոշակի դժգոհություններով: Մասնավորապես փախստականի կարգավիճակում գտնվող այն ընտանիքները, հատկապես տարեցները, ովքեր կարիք ունեն որոշ առանձնահատուկ մոտեցման:

Հաշվի առնելով, որ իրենք փախստական են դարձել մարդասպան մի ժողովրդի կողմից և թողնելով ամեն ինչ՝ Հայաստանում շուրջ 30 տարի ապրում են մեկ այլ կարգավիճակում, կոնկրետ կացարաններում, խնդրում եմ իրենց հանդեպ ևս լինել հետևողական: Հարցս վերահաստատելով՝ խնդրում եմ շատ հանգամանալից ներկայացնել ամբողջ այս գործընթացի մասին, որպեսզի և՛ հանրությունը, և՛ իրենք տեղեկանան քաղաքապետարանի կողմից իրականացվող աշխատանքների մասին, շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն, Արցախի փողոցի հ. 8 և հ. 10 հասցեներում գտնվող բազմաբնակարան հանրակացարանների հետ կապված իրավիճակը թեակոխել է հետևյալ փուլ. Արցախի հ. 10 շենքի բնակիչների մասով ունենք որոշակի տարաձայնություններ: Բնակիչների մի մասը՝ թվով 19 ընտանիք, մեր պայմանների հետ համաձայնության չեն եկել: Դրանք այն պայմաններն են, որոնք ամենաօբյեկտիվն են և այն այլընտրանքային տարբերակը, որ մեր կողմից առաջարկվել է բնակիչներին լքել շենքը՝ հաշվի առնելով դրա վթարային վիճակը, կյանքի և առողջության համար ներկայացնող վտանգը: Պայմանը եղել է այն, որ քաղաքապետարանը պատրաստ է բաշխել այս պահին քաղաքապետարանում առկա ամբողջ բնակարանային ֆոնդը: Քանի որ դա չի բավականացնում 2 շենքի բնակիչներին ամբողջությամբ վերաբնակեցնելու առկա բնակարաններում, առաջարկվել է բնակիչների մի մասը տեղափոխվեն քաղաքապետարանի միջոցներով վարձվող բնակարաններ, որոնց բնակարանային պայմաններն անհամեմատ ավելի լավ են լինելու, քան իրենց առկա վիճակը: Բնակիչների մյուս մասը կտեղավորվեին արդեն առկա բնակարաններ՝ պայմանով, որ մնացած մասը Սիսակյան փողոց հ. 3 հասցեում համայնքային բնակարանաշինության ծրագրով կառուցվող շենքում կստանան բնակարաններ՝ դրանց շահագործման պահին: 83 բնակարանից 19-ը հրաժարվել են այս առաջարկից և գերադասել են մնալ շենքում: Մյուսների հետ աշխատանքները կատարվում են, բաշխումն իրականացված է: Այստեղ խնդիրը 1-սենյականոց բնակարանների հետ է կապված, քանի որ մեր ֆոնդը, ընդհանուր առմամբ, 55-ն է, 27-28 հարաբերակցությամբ, դրանք առաջարկվել են 2 շենքերին՝ արդարության սկզբունքի ամբողջական պահպանմամբ:

Իրավիճակն այլ է Արցախի փողոցի հ. 8 շենքում, որտեղ բոլոր բնակիչները համաձայնել են այս պայմանին: Ներկայումս նրանց հետ կնքվում են համաձայնագրերը և պատրաստվում են քաղաքապետի որոշումներ՝ նրանց այս ծրագրով վերաբնակեցնելու համար:

Արցախի փողոցի հ. 10 շենքի հետ կապված մեր կողմից բնակիչներին արվել է լրացուցիչ առաջարկ՝ տեղափոխվել շենքի ավելի անվտանգ հատված, մյուս հատվածը կոնսերվացնելու պայմանով: Դա 1-ին և 2-րդ հարկերի աջ թևն է: Մենք նշել ենք, որ, եթե նրանք տեղափոխվեն այս հատված, պետք է կոնսերվացնենք վերին 2 հարկը և 1-ին երկու հարկի ձախ հատվածը: Այսպես գոնե կապահովվի բնակչության քիչ թե շատ անվտանգությունը: Այս պահին բանակցություններ են ընթանում բնակիչների հետ:

Արման Անտոնյան

-Շնորհակալությու՛ն պարոն Սարգսյան, հանգամանալից պատասխանի համար: Ցանկանում եմ մասնավորեցնել կոնկրետ փախստականի կարգավիճակ ունեցող շուրջ 15 ընտանիքի մասին, ովքեր այլ պատճառաբանմամբ են ներկայանում մերժելու այս կամ այն առաջարկը: Ի՞նչ են նրանք պատճառաբանում, որ մերժում են քաղաքապետարանի առաջարկը, խնդրում եմ պարզաբանել այս հարցը: Մասնավորապես իրենց ճակատագիրն ի՞նչպես է լինելու: Կրկին խնդրանք, եթե հնարավոր կլինի որոշակի առանձնահատուկ մոտեցում ցուցաբերել՝ հաշվի առնելով իրենց կարգավիճակը և այն, որ ամեն ինչ թողել, եկել են Հայաստան: Այնպիսի պայմաններ ստեղծվեն, որ իրենց կյանքի վերջին տարիները, ներողություն եմ խնդրում, սա ասում եմ, քանի որ մեծ մասը տարեցներ են, դրական կյանքով ապրեն մեր սիրելի քաղաքամայր Երևանում, շնորհակալությու՛ն:

Հայկ Սարգսյան

-Փախստականի կարգավիճակ ունեցող բնակիչների մասով պետք է ասեմ, որ վերաբնակեցման ծրագրով նրանք արդեն իսկ, պետության կողմից երաշխավորված, օրենսդրությամբ սահմանված իրենց առավելություններից օգտվում են և օգտվել են: Այս ծրագրում, որպես մեր կողմից առաջարկ, հնչել է առավելությունների տրամադրման հետևյալ տարբերակումը. անկախ կարգավիճակից փախստական, թե մշտաբնակ, առաջարկել ենք տարեցներին և այն ընտանիքներին, ովքեր հաշմանդամություն ունեցող անդամ ունեն, տալ առավելություններ: Նրանք կտեղափոխվեն առկա բնակարաններ, դրա փոխարեն մյուս մասը առայժմ կբնակվի ժամանակավոր վարձակալությամբ: Այս պայմանը պետք է շենքի կառավարման համակարգում քննարկվեր և շենքի կոնսենսուսով համաձայնությունը կայանար, որը տեղի չի ունեցել իրենց իսկ բնակիչների միջև: Մեր անելիքներն այստեղ չափազանց սահմանափակ են:

Արման Անտոնյան

-Կողմնապահ մոտեցում է այնտեղ ցուցաբերվում տեղի ինքնակառավարվող մարմնի կողմից, շնորհակալությու՛ն:

Հայկ Սարգսյան

-Նկատի ունեք համատիրությու՞նը:

Արման Անտոնյան

-Այո՛:

Հայկ Սարգսյան

-Այնտեղ կա համատիրության գործունեությունը կանոնակարգող նորմատիվային ակտեր, որտեղ 2/3-ի որոշմամբ է կայացվում տվյալ բնույթի որոշումը: Ցավոք, իրենց մեջ այս

վերաբերմունքի և համաձայնության բաշխումը չի կայանում: Կրկնում եմ այստեղ մենք անելիք չունենք: Այդ նույն խնդիրը լուծվել է կողքի շենքում, 8-րդ շենքում, 10-րդ շենքում բնակիչների միջև է խնդիրը: Համատիրությունը կողմնապահություն է անում, թե՝ ոչ, չենք տիրապետում նման տեղեկատվության: Եթե ունեք փաստեր, տրամադրեք, փորձենք իրենց հետ պարզաբանել այդ հարցը:

Արման Անտոնյան

-Այո՛, փաստեր կան, կներկայացնեմ Ձեզ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Նշեմ նաև, որ Արզումանյան փողոցում ունենք տարհանված բնակարաններ, որոնց բնակիչներին տրամադրվել են վարձով բնակարաններ: Պետք է ասեմ, որ, ցավոք սրտի, կան բնակիչներ, ովքեր այդ գումարը վերցնում են, բայց գնում են ապրում այն վտանգավոր բնակարաններում: Նման դեպքեր էլ ենք ունենում, խնդրում եմ սա ի նկատի ունեցեք:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Անի Խաչատրյան, խնդրե՛մ

Անի Խաչատրյան

-Սիրելի՛ ընկերներ, օրեր առաջ ֆեյսբուքյան մի գրառում էի արել՝ «նոր Հայաստանում, հին վարքագծով» բովանդակությամբ: Այդ անանուն գրառումը բուռն քննարկվեց ավագանու ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամների կողմից: Կրկնում եմ անանուն գրառումը, այսինքն՝ ձեզ նույնպես պարզ է, թե ձեր որ թիմակիցը կարող է հին Հայաստանին բնորոշ վարքագիծ դրսևորել:

Հիմա ըստ էության: Սույն թվականի մայիսի 26-ին վարչական շրջաններից մեկի ղեկավարն իր վարչական շրջանի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետին, ով ունի բարձրագույն կրթություն, 11 տարվա աշխատանքային փորձ, տիրապետում է օտար լեզուների, 2 ամիս առաջ տեղափոխում է առևտրի բաժին՝ պատճառաբանելով, որ տվյալ հաստիքի համար պահանջվում է իրավաբանական կրթություն: Նշեմ, որ այդ հաստիքի համար իրավաբանական կրթություն չի պահանջվում: Ամսի 26-ին կանչում է աշխատակցուհուն իր աշխատասենյակ, շաբաթօրյակի ֆեյսբուքյանի ինչ-որ նկարի անհեթեթ պատմություն մոգոնում, որն այդպես էլ չի ստացվում ապացուցել, ստիպում է ազատման դիմում գրել: Եթե վատ աշխատող էր, հեռացնեիք, սակայն սրանով ամեն ինչ չի ավարտվում, ստիպել բառը պատահական չեմ ասում: Այժմ կմեջբերեմ վարչական շրջանի ղեկավարի բառապաշարից մեկ-երկու բառ՝ ուղղված 32-ամյա երիտասարդ կնոջը, ով իր խնամակալության տակ ունի հիվանդ մայր և անչափահաս երեխա: Հիմա մեջբերումներ անեմ վարչական շրջանի ղեկավարի բառապաշարից. «լսի՛ աղջի, 10 բոպեից դիմումդ սեղանիս լինի», «քանի՞ երեխա ունեիր» հեգնական տոնով հարցնում է վարչական շրջանի

ղեկավարը: Լսելով պատասխանը՝ մեկ երեխա, վարչական շրջանի հոգատար ղեկավարը շարունակել է. «դե գնացեք, ինչ ուզում եք եղեք, սոված սատկեք»: Այս ամենը տեղի է ունեցել երկու փոխթաղապետերի ներկայությամբ: Ասեմ որ, մինչև այդ, տևական ժամանակ հոգեբանական տարբեր ճնշումների են ենթարկել տվյալ աշխատակցուհուն: Վարչական շրջանի նոր ղեկավարությունը նրան միջանցքում հանդիպելիս ամեն անգամ ծաղրել ու հեգնել է: Օգտվելով այդ կնոջ անպաշտպան վիճակից՝ փորձել են հասնել իրենց նպատակին, որպեսզի ինքնակամ դիմում գրի, բայց այդ կինն իր խնամակալության տակ ունենալով հիվանդ մայր և անչափահաս երեխա, դիմացել է այդ կտտանքներին: Կարծում եմ այսքան տարիներ բոլորս պայքարել ենք նման ղեկավարների դեմ, բայց այսօր նոր իշխանությունում կա այդպիսին:

Ի դեպ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունն ասում է, որ մարդը գերագույն արժեք է: Այսօր այս դահլիճում ներկա է այդ գերագույն արժեքներից մեկը, ում իրավունքները բիրտ կերպով ոտնահարվել են: Հիմա դիմում եմ Ձեզ՝ պարոն քաղաքապետ, ավագանու հարգարժան անդամներ, դիմում եմ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ, Ազգային ժողովի մարդու իրավունքների մշտական հանձնաժողովին, պաշտպանեք այս կնոջ իրավունքները: Դիմում եմ նաև այն բոլոր հասարակական կազմակերպություններին, որոնք Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանությունը փորձում են հասցնել այն մակարդակին, որ պաշտպանված լինեն նույնիսկ տրանսգենդերների իրավունքները: Սկզբում պաշտպանեք հայ կնոջը, ով հայ ազգի համար ապագա զինվոր է լույս աշխարհ բերել ու մեծացնում է միայնակ:

Պարո՛ն քաղաքապետ, լիահույս եմ լինելու և պահանջատեր այս կնոջ աշխատանքի վերականգնման մանրամասների ուսումնասիրության և մեղավորներին պատժելու հարցում: Ուզում եմ նաև չմոռանանք, որ երկրի ղեկավարը բազմիցս հայտարարել է, որ Հայաստանի Հանրապետությունում անպատժելի մարդիկ չեն լինելու: Օգտվելով անպաշտպան վիճակից ստիպել էիք դիմում գրել, չէի՞ք մտածում չէ, որ ինձ է գործը հասնելու Ավան վարչական շրջանի ղեկավար Արա Դանիելյան: Ի՞նչ բացատրություն կտաք Ձեր վարքագծի համար պարո՛ն Դանիելյան, ինչու՞ չեք գիտակցում, որ Դուք այլևս նախկին իշխանության ոստիկանը չեք և զբաղեցնում եք վարչական շրջանի ղեկավարի պաշտոնը, որտեղ օպերլիազորին բնորոշ վարքագիծն այլևս կիրառելի չէ:

Հայկ Մարության

-Խնդրում եմ, այնուամենայնիվ, կոռեկտ արտահայտվել և տեղավորվել տրված ժամանակահատվածի սահմաններում: Հարցին կպատասխանի Ավան վարչական շրջանի ղեկավար Արա Դանիելյանը:

Արա Դանիելյան

-Պարո՛ն քաղաքապետ, ավագանու հարգելի՛ անդամներ, ես համարում էի, որ այս դահլիճում չէ որ պետք է պարզեինք ո՞վ է ճիշտ, ով՝ սխալ: Այսպիսի կարկառուն ելույթին ստիպված եմ նույն մակարդակով պատասխանել: Վանուհի Գալստյանը շուրջ 10 տարի հաշվառված է եղել Ավան վարչական շրջանի աշխատակազմի իրավաբանական բաժնում: Հաշվառված լինելով այդ բաժնում՝ նա նաև մի քանի ամիս աշխատանք է տարել քաղաքապետարանում, եղել է նախկին քաղաքապետ Տարոն Մարգարյանի օգնականը:

2018թ. դեկտեմբերի 13-ին՝ իմ նշանակվելուց հետո, իրավաբանական բաժինն իմ անմիջական հսկողության տակ է եղել, որը տվել է իր արդյունքները: Բաժնում իրավաբանական կրթությամբ միայն բաժնի պետն է եղել, մինչև Վանուհուն տեղափոխելը: Նշանակվելուց 10 օր հետո Վանուհուն կանչել եմ ինձ մոտ, հարցրել, թե ու՞ր կարելի է քեզ տեղափոխել: Նա ինձ խնդրեց, ասաց, որ երկու երեխա ունի՝ դա մեկ սուտ, մայր ունի, խնդրեց, որ իրեն չազատեմ, համոզվեցի: Այդ աշխատասենյակն էլ փոքր է, որպեսզի նոր մարդ կարողանա տեղավորվի, ասացի, որ գնա առևտրի բաժնում սպասի, մինչև տեղ ազատվի, աշխատանքի տեղավորենք: Նա մեծ ուրախությամբ համաձայնեց և երկու ամիս մնաց:

Ի դեպ՝ համեմատական եմ անցկացրել 2018թ. և 2019թ. առաջին 4 ամիսների միջև: Իրավաբանական բաժնի պետի և նոր նշանակված իրավաբանների աշխատանքների արդյունքում 10 մլն. դրամ է հավաքագրվել: Ես դա գիտեի և այդ էր պատճառը, որ անդրադարձել եմ բաժնի կադրային փոփոխության հարցին: Ամբողջը հնարավոր է պարզել աշխատակազմի մնացած աշխատակիցների միջոցով: Իմ դաստիարակությունը և կրթությունն ինձ երբեք թույլ չեն տա նման արտահայություններ անել:

Տիկի՛ն Խաչատրյան, ես Ձեզ նման խղճահարված եղել եմ երկու ամիս, բայց Վանուհին ինձ ստել է և երեխաների թվի հարցում և, ինչպես Դուք եք նշում, ֆեյսբուքյան գրառումները, որը բերում էր Ձեր իսկ կողմից ճանաչված ընտանիքի քայքայման: Ես ընդամենն ասել եմ, որ իր ստի պատճառով դիմում գրի և տեղափոխվի այլ աշխատանքի: Իմ աշխատասենյակում են եղել իմ երկու տեղակալները, ովքեր կարող են պնդել իմ խոսքերը, իսկ նման արտահայտություններ, ինչպես ներկայացրեց տիկին Խաչատրյանը, չեն եղել:

Անի Խաչատրյան

-Ազատեիք, այդ դեպքում ինչու՞ եք դիմում գրել տալիս, եթե վատ աշխատող էր, եթե չէր համապատասխանում ազատեիք աշխատանքից: Վարչապետի մեղքը չեկավ դրոշի համար մարդ ազատելուց, Դուք էլ իմ մեղքը չեք գալու, ես պայքարելու եմ աշխատանքից Ձեր ազատման համար, քանի որ Դուք հին Հայաստանի ոստիկանի վարքագիծ ունեք: Ես 20 տարի

պայքարել եմ Ձեր նմանների դեմ: Ձեր նմաններն ինձ 18 տարեկանում ոստիկանության բաժիններում ծեծի են ենթարկել, Դուք այդ ոստիկանական մտածելակերպից դուրս չեկած վարչական շրջանի ղեկավար եք, որ թույլ եք տալիս կնոջ հանդեպ, կրկնում եմ, ով զինվոր է լույս աշխարհ բերել այս երկրի համար, Ձեզ պահեք այդպես: Դուք Տարոն Մարգարյանի կոռումպացված վատ թաղապետը պահող քաղաքապետը չէիք, մեր ելույթների հիման վրա Դուք այդ փոխթաղապետին հեռացրիք:

Հայկ Մարության

-Տիկի՛ն Խաչատրյան, վստահեցնում եմ, որ Ձեր ելույթների հիման վրա քաղաքապետարանում ընդհանրապես ոչինչ տեղի չի ունենում: Հարցի վերաբերյալ պարոն Դանիելյանը ներկայացրեց իր տեսակետը, եթե այլ տեսակետներ կամ պնդումներ կան, գոյություն ունեն տարբեր ատյաններ, որտեղ կարելի է այս ամենը բողոքարկել, լուծել:

Անի Խաչատրյան

-Երկրորդ հարցս հնչեցնեմ: Ամիսներ առաջ քաղաքապետը հայտարարեց, որ մեր պարկում կա 70 ավտոբուս, որոնք իր համար անհասկանալի պատճառներով չեն շահագործվել: Պարո՛ն քաղաքապետ, հասկացաք ինչու՞ չեն շահագործվել: Անցել են ամիսներ, մինչև օրս քանի՞ մեքենա է շահագործման դուրս եկել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի առաջին տեղակալ Հրաչյա Սարգսյանը:

Հրաչյա Սարգսյան

-Ինչպես նշել էինք «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ում ունեինք 70 ավտոբուս, որոնք չէին շահագործվում, նախորդ անգամ ես այս հարցի շուրջ պարզաբանումներ ներկայացրի: Այս պահի դրությամբ կան որոշ երթուղիներ, որոնք փակվում են և քաղաքապետարանը նախատեսում է այդ ավտոբուսները շահագործել այն երթուղիներում, որոնք փակվելու են: Այս պահի դրությամբ արդեն 10 ավտոմեքենա իր շարժակազմով պատրաստ է, որոշ երթուղիների փակվելու դեպքում դրանք այդ երթուղում կշահագործվեն:

Անի Խաչատրյան

-Պարո՛ն քաղաքապետ, կրկնեմ հարցս, հասկացաք ինչու՞ չեն շահագործվել մեքենաները: Դուք եք հարցազրույց տվել և չեք իմանում ինչու չեն շահագործվում մեքենաները:

Հրաչյա Սարգսյան

-Դա չէ պատճառը, քանի որ գոյություն ունի և՛ մասնավոր, և՛ պետական հատված, որը շահագործում է գործող երթուղային ցանցը, իսկ նոր ավտոբուսները նոր ցանցում օգտագործելու համար նշանակում էր որոշ երթուղիներ պետք է փակվեն:

Քաղաքապետարանն այդ երթուղիները չի փակել և մասնավոր հատվածին հնարավորություն է տվել իր շարժակազմով աշխատել: Այն երթուղիները, որոնք սնանկության փուլում են կամ փակվելու են, ապա այդ ավտոմեքենաները կօգտագործվեն դրանց փոխարեն: Միայն այդ չի պատճառը, որ ավտոբուսները չեն շահագործվել, այսինքն՝ եղել է պահուստային ֆոնդ, նաև այն է, որ գոյություն ունի գործող երթուղային ցանց և գործող երթուղային ցանցում նոր երթուղի ավելացնելու դեպքում նշանակում էր, որ այլ երթուղիների ուղևորահոսքը պետք է սպասարկեին այդ ավտոբուսները և այդ երթուղիները նույնպես կգնային սնանկացման: Այդ է պատճառը, խնդրում եմ միայն չնշել, որ դա պահուստային ֆոնդն է, գիտենք, որ ավտոբուսների համար անհրաժեշտ է նաև պահուստային ֆոնդ: Բայց 259 ավտոբուսից 70 ավտոբուսը մոտավորապես 30%-ից մի փոքր ավելի է կազմում, իսկ նման պրակտիկա չկա, որ ավտոբուսների պահուստային ֆոնդում 30%-ից ավելին լինի:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Հռիփսիմե Առաքելյան, խնդրե՛մ:

Հռիփսիմե Առաքելյան

-Հարցս վերաբերում է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում գործող թիվ 94 մանկապարտեզում վերջերս տեղի ունեցած իրադարձությանը: Շատ հակիրճ կփորձեմ ներկայացնել, եթե կան ոմանք, ովքեր տեղեկացված չեն, մամուլում ևս հրապարակումներ եղել են: Ցանկանում եմ նշել, որ մինչ մամուլում մանկապարտեզի այդ թնջուկի մասին տեղեկությունների հրապարակումը, մեր խմբակցությունն արդեն իսկ ստացել էր այդ մասով բողոք: Մամուլում այդ նյութի հրապարակման իսկ օրը մենք պետք է այցելեինք տվյալ մանկապարտեզ: Լավ էր, որ հրապարակումը եղավ, անմիջապես դրան հաջորդեց մեր այցելությունը տվյալ մանկապարտեզ:

Ինչ էր տեղի ունեցել մանկապարտեզում. չեմ մանրանա իրավական մանրամասների մեջ, քանի որ այս պահին ծնողը բողոքել է ոստիկանություն և գործընթացներ են ընթանում: Խոսքը վերաբերում է 3.5 տարեկան երեխայի նկատմամբ բռնություն կիրառելուն, որը, ըստ ծնողի ներկայացրած փաստերի, կատարել էր տվյալ մանկապարտեզի դաստիարակը: Տեղեկատվությունը երբ հայտնվեց մամուլում, բնականաբար, քաղաքապետարանը նույնպես արձագանքեց: Արձագանքի բնույթից, անկեղծ ասած, ես առանձնապես բավարարված չեմ, քանի որ ընդամենը հանրակրթության վարչության տեսուչի մակարդակով այցելություն էր եղել տվյալ մանկապարտեզ: Դա այն պարագայում, երբ այս մանկապարտեզում արդեն ամիսներ շարունակ այս խնդիրը ներսում կա, պարբերաբար փորձվել է կոծկել և քաղաքային բարձր իշխանության ականջից հեռու պահել այս պատմությունը:

Ինչ է տեղի ունեցել. 2019թ. հունվար ամսից այստեղ նշանակվում է ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղասաբօղլյանը՝ ով ներկա է եղել այդ բոլոր գործընթացներին: Նա բազմիցս ժողով է հրավիրել ծնողների մասնակցությամբ, քանի որ այս խնդիրը ծնողների կողմից է բարձրացվել, որ տվյալ դաստիարակը, կան նաև կարծիքներ որ դայակը, բռնություն են կիրառել երեխաների նկատմամբ, հարցի պարզաբանմամբ իրավապահ մարմինները կզբաղվեն: Այս դեպքում, ըստ ծնողի վարկածի, երեխայի նպատմամբ եղել է ծեծ՝ տարբեր ձևերով, ճմկտոց, ճանկռտոց:

Այստեղ ինձ համար շատ կարևոր հանգամանք է այն, որ տվյալ ժամանակավոր պաշտոնակատար նշանակված մանկապարտեզի տնօրենը, որը 2019թ. հունվարին է նշանակվել, այս պատմություններն ի ցույց չհանելով և փորձելով աղմուկ չբարձրացնել մանկապարտեզի շուրջ, դրանից մի քանի ամիս հետո, տվյալ մանկապարտեզի հիմնական մրցույթին մասնակցելու փոխարեն շատ արագ անցում է կատարում և մասնակցում Արաբկիր վարչական շրջանում հայտարարված դպրոցի մրցույթներից մեկին:

Իր՝ դպրոցի տնօրեն նշանակվելուց հետո, այս պատմության շուրջ անմիջապես աղմուկ է բարձրանում, դե արդեն նորմալ է, տնօրենի ժ/պ-ն այնտեղ չէ և ներկա գործող ժամանակավոր պաշտոնակատարը փորձում է այս բոլոր հարցերի պատասխանները տալ: Հարցի մասով կցանկանայի մանրամասն բացատրություն լսել, ինչպիսի մոտեցում ունենք սրան, ինչպես նաև հանրակրթության վարչության տեսուչի այցելությունից հետո ինչ եզրակացություններ է արել քաղաքապետարանը: Ես ցանկանում եմ նաև իմանալ տիկին Ստեփանյանն ինչու անձամբ չի այցելել տվյալ մանկապարտեզ՝ հասկանալու, թե ինչ է կատարվում, և, առհասարակ, ինչպիսին է քաղաքային իշխանության գնահատականները:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալությու՛ն պարոն քաղաքապետ, շնորհակալություն հարցի համար: Թիվ 94 մանկապարտեզում տեղի ունեցած խնդիրների մասին Երևանի քաղաքապետարանը և անձամբ ես տեղեկացել ենք այն ժամանակ, երբ լրագրող Արթուր Հայրապետյանը կապվեց ինձ հետ և նշեց, որ իրեն ներկայացրել են լուսանկարներ, ինչպես նաև ծնողը բողոքել է, որ երեխայի հանդեպ եղել է բռնություն: Նա, բնականաբար, ուզում էր հրապարակում անել: Մենք, իհարկե, թույլատրեցինք, չխոչընդոտեցինք և չփորձեցինք կոծկել, ինչպես ասվում է: Պարոն Հայրապետյանն արեց իր հայտարարությունը: Այնուհետև ես հայտարարության տեքստը ուղարկեցի վերահսկողության վարչություն, որտեղ գրություն կազմվեց՝ հաղորդում

հանցագործության մասին և ուղարկվեց ոստիկանություն: Ոստիկանությունը նյութեր է նախապատրաստել քրեական գործ հարուցելու համար, արդյունքում, բավարար հիմքեր չունենալու պատճառով, քրեական գործի հարուցումը մերժվել է: Որոշումն ուղարկվել է Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն՝ քրեական գործ չհարուցելու որոշումը հաստատելու կամ մերժելու համար: Դատախազությունը հայտնել է իր որոշումը, որ ոստիկանության որոշումն իրավաչափ է:

Ծնողը հրաժարվել է երեխային տանել դատաբժշկական փորձաքննության, ինչը կարող էր լրացուցիչ հիմքեր տալ, որպեսզի քրեական գործ հարուցվի: Ծնողի փաստաբանը եղել է դատախազությունում, իրեն ներկայացվել է մերժման պատճառները, ընթացակարգը, թե ինչպես կարող են 7 օրվա ընթացքում բողոքարկել վերադաս դատախազին կամ դիմել դատարան:

Նշեմ, որ տվյալ մանկապարտեզի դաստիարակը և օգնականը գտնվում էին արձակուրդի մեջ: Դաստիարակի օգնականը վերադարձել է և իր դիմումի համաձայն ազատվել է աշխատանքից, իսկ դաստիարակն այժմ գտնվում է արձակուրդում:

Այն դեպքերն ու հանգամանքները, որոնց հայտարարություններն իրենց մեջ քրեական էլեմենտ են պարունակում, հանրակրթության վարչությանն արգելում ենք որևէ կերպ ներգրավված լինել, մասնակցել այդ գործընթացներին, մինչև ոստիկանության վերջնական կարծիքը չի լինում դեպքի մասին: Այսօր առավոտյան խոսել եմ Երևան քաղաքի դատախազի տեղակալի հետ, ով ներկայացրեց մերժման հիմքերը: Վաղվանից սկսած, երբ արդեն իրավական հարթությամբ պարզ է ամեն ինչ, մեր համապատասխան բաժինների աշխատակիցները կսկսեն իրենց ուսումնասիրությունները, որպեսզի չխոչընդոտեն նախաքննության ընթացքին:

Պարո՛ն քաղաքապետ, ցանկանում եմ նաև Ձեր ուշադրությունը հրավիրել հնչվող անվանը՝ հ. 51 դպրոց, Լուսինե Ղասաբօղլյան: Չեմ ցանկանում հիմա չակերտները շատ բացել, այս պատմությունն ունի ենթաշերտ, որի մասին ես առաջիկայում կբարձրաձայնեմ: Ձերդ կմնամ հիմա գնահատականներ տալուց, բայց ես հորդորում եմ՝ մանկապարտեզները և այնտեղ հաճախող երեխաների հետ կապված խնդիրները չտեղափոխել ներանձնային հարաբերությունների և վրեժխնդրության դաշտ: Հակառակ դեպքում, եթե խնդիրը բարձրացնում են և դարձնում լրատվությունների քննարկման թեմա, պատրաստ լինեն մինչև վերջ գնալ իրենց բարձրացրած խնդրի հետևից: Եթե պահանջվում է երեխային ներկայացնեն դատաբժշկական փորձաքննության, որպեսզի քրեական գործ հարուցելու բոլոր հիմքերը լինեն, նաև դիմեն այդ քայլին: Հակառակ դեպքում, խնդիրը բարձրաձայնելը և պարզաբանումից հրաժարվելն ուղղակի ավելորդ աղմուկ է առաջացնում քաղաքում:

Եկեք հաշվի առնենք, որ այդ աղմուկը նաև ազդում է մանկապարտեզ հաճախող 30.000 երեխաների ծնողների վրա: Այս մասով, եթե այդ զգուշավոր և նուրբ թեմային մենք անդրադառնում ենք, հետևողական լինենք մինչև վերջ խնդիրը բարձրաձայնելու, շնորհակալություն:

Հռիփսիմե Առաքելյան

-Ճիշտն ասած, պարոն Վիրաբյանի նշած ենթատեքստը ժամանակավոր պաշտոնակատար Լուսինե Ղասաբօղլյանի վերաբերյալ չհասկացա: Ընդամենը ցանկանում էի հասկանալ, եթե հունվար ամսին տվյալ տիկինն այդ մանկապարտեզի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել և ենթադրվում էր, որ ժ/պ-ից հետո սովորաբար այդ մարդիկ գնում, մասնակցում են տվյալ ընկերության, կազմակերպության հիմնական մրցույթի՝ հավակնություններ ունենալով դառնալ տնօրեն, ինչն է եղել պատճառը, որ այս խնդիրն այդ ամիսներին բարձրացվելուց հետո, տվյալ տիկինը շատ արագ տրանսֆորմացվել է և դարձել դպրոցի տնօրեն, խոսքը սրա մասին էր:

Պարոն Վիրաբյան, ինչ վերաբերում է իրավական հարցերին, ես ինքս զերծ եմ մնում գնահատականներ տալուց, քանի որ դա մեր գործառույթների մեջ բացարձակապես չի տեղավորվում: Խնդիրը սա է՝ ինչ հանգամանքների բերումով է տվյալ տիկինը մանկապարտեզից տեղափոխվել դպրոցի տնօրեն և ինչու չի շարունակել կամ չի փորձել մասնակցել այդ մրցույթին: Այս ընթացքում տեղի է ունեցել այս պատմությունը տվյալ մանակապարտեզում:

Տիգրան Վիրաբյան

-Ցանկացած քաղաքացի ինքն է ընտրում իր գործունեության ոլորտը: Տիկին Ղասաբօղլյանն ունեցել է հավաստագիր, որն իրեն իրավունք է տվել մասնակցելու դպրոցում հայտարարված մրցույթին: Ինքն է որոշում, թե հետագա իր աշխատանքը կրթական որ ստորաբաժանումում է ուզում շարունակել: Այստեղ մենք լիազորություն չունենք աշխատակիցներին հարցնել, թե ինչու են որոշել ընտրել հանրակրթության ոլորտի դպրոցը, ոչ թե՝ մանկապարտեզը: Սա իր որոշումն է և ինքն իրավունք ունի այն կայացնելու:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արմեն Ղալեչյան, խնդրե՛մ:

Արմեն Ղալեչյան

-Պարո՛ն քաղաքապետ, ես հանում եմ իմ հարցը:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Կիրակոսյան, խնդրե՛մ:

Լիլիթ Կիրակոսյան

-Շնորհակալությու՛ն, ես իմ գործընկեր Լուսինե Գևորգյանի հարցը կբարձրացնեմ, որովհետև նա հիմա այստեղ չէ: Հարցը վերաբերում է բյուջեի հավաքագրման թերակատարմանը: Լսեցինք պարոն Խաժակյանի ելույթը, առ այն, որ բյուջեն թերակատարվել է 50 մլն. դրամով: Խնդրում եմ պարզաբանել, արդյոք արված հայտարարությունը համապատասխանու՞մ է իրականությանը, թե՝ ոչ, շնորհակալություն:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն տիկին Կիրակոսյան:

Պարոն Խաժակյանի կողմից հնչեցված թվերն ինձ համար խորթ էին և անծանոթ: Այնուամենայնիվ՝ մի քանի ճշգրտումներ անեմ այդ թվերում: Եթե չեմ սխալվում, տուրքերի մասով նշվեց, որ 50 մլն. պակաս են հավաքագրվել: Իրականում տուրքերը 199 մլն. դրամով ավել են հավաքագրվել:

Ինչ վերաբերում է հոդվածափոխությանը, պլանի վերանայմանը մարտի 29-ին, ապա դա ամենևին նպատակ չուներ կատարողական ապահովել: Պետք է հայտնեմ, որ պլանի կատարման պահանջ առ հոկտեմբերից, երբ նոր քաղաքային իշխանությունը եկել է, որևէ վարչական շրջանի եկամուտներ հավաքագրող որևէ ստորաբաժանման նկատմամբ չի ներկայացվել: Ավելին հանձնարարական է իջեցվել բոլոր նման ստորաբաժանումներին զերծ մնալ ցանկացած կանխավճարներ, գերավճարներ, նախավճարներ հավաքագրելուց: Այդ է պատճառը, որ երկար ամիսներ, որոնք բաց թողնվեցին եկամուտների հավաքագրման գործառույթներով և թերհավաքագրվեցին, տարին փակեցինք 97% կատարողականով՝ առանց ձգտելու լրացնել այդ 3%-ը:

Ամփոփելով թվային բացահայտումները՝ նշեմ, որ մարտի 31-ի դրությամբ, իրականում Դուք համեմատում էիք նախորդ տարվա հետ, 2018թ. նույն ժամանակահատվածի համեմատ մուտքերը 471 մլն. դրամով ավել է հավաքագրվել: Այն պարագայում, երբ այդ մուտքերի պլանն արդեն իսկ 10% աճեցված էր պլանավորված բյուջեով:

Հայկ Մարության

-Ես նույնպես շնորհակալ եմ, պարոն Սարգսյան, ոչ միայն պատասխանի, այլև՝ աշխատանքի համար: Շնորհակալություն վարչական շրջանների ղեկավարներին, աշխատակազմի եկամուտների հաշվառման և գանձման վարչության աշխատակիցներին՝ լավ աշխատանքի համար: Քանի՞ միլիոն էր ավել հավաքագրված:

Հայկ Սարգսյան

-Պարո՛ն քաղաքապետ, 471 մլն. դրամ: Կարճ հավելեմ, որ մենք կատարել ենք 1-ին եռամսյակի համար պլանավորված 6 մլրդ. 600 մլն. ցուցանիշը 100.3% -ով:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հաճելի է լսել, որովհետև այս բոլոր գումարները վստահաբար լավ գործի են ծառայելու:

Լիլիթ Կիրակոսյան

-Ստացվում է, որ պարոն Խաժակյանի արած հայտարարությունը սխալ է, բայց այդ ելույթից հետո ԼՈՒՅՍ դաշինքի պաշտոնական էջն արդեն տարածել է այս հայտարարությունը, որ 50 մլն դրամի սխալ հավաքագրում է արվել:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն տեղեկատվության համար:

Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության ղեկավար Դավիթ Խաժակյան, խնդրե՛մ:

Դավիթ Խաժակյան

-Ես բացել էի այդ հրաշք նամակը, որ մեզ ուղարկել էին քաղաքապետարանի աշխատակազմից, որը ավագանու բոլոր անդամներին է ներկայացվել. Երևանի 2019թ. բյուջեի առաջին եռամսյակի կատարման վերաբերյալ հաշվետվություն: Պարոն փոխքաղաքապետ, Ձեզ ներկայացնեմ Երևան մուտքագրվող գումարների կառուցվածքը՝ մի կողմից հարկեր և տուրքեր՝ որպես եկամուտ, մյուս կողմից՝ գույքերի իրացումից գոյացող գումարներ, որոնք արտացոլված չեն այս փաստաթղթի եկամտային մասում: Խնդրեմ, նայեք Ձեր հավելված հ. 3-ը, որտեղ այդ թվերը համադրելուց, կտեսնեք, թե ինչ տարբերության մասին եմ խոսում:

Մյուս կողմից ապշած եմ, որ, փաստորեն, Դուք չեք հետևում, թե համայնքի բյուջե որքան գումար է մուտքագրվել, որքան՝ ոչ: Դուք համեմատում եք, այո, այն, ինչ գրված է ծախսային մեկ հոդվածը մյուսի հետ, համեմատեք մյուսը՝ գույքի և հողի իրացումից որքա՞ն գումար եք հավաքագրել: Այս երկու կոմպոնենտը գումարում ենք իրար և ստացվում է համայնքի մուտքերը, այլ մուտք համայնքը չունի՝ չհաշված կառավարության կողմից պատվիրակված լիազորությունները և սուբվենցիաները:

Հիմա, եթե Դուք ձեր մուտքերը չեք ուսումնասիրում, այս հարցը շատ լավն էր. պարզաբանեցիք, թե ինչ եղավ, ծափահարեցին, ի դեպ, ծափահարելու առարկա կա, որովհետև այն մասով, որ տուրքը բարձրացվել է, այդ մասով հավաքագրումը, այո, նախորդ տարվանից շատ է, բայց ես հանրագումարային թիվ հնչեցրի, ընդ որում, այդ նրբությունը, որ

չասացի եկամուտները, ասացի մուտքերը, որը բացարձակ թիվ է, ես ապշած եմ: Ֆեյսբուքում հարցնում են՝ չէի՞ն նայել, որ թերհավաքագրում է եղել, հարցի պատասխանն է՝ չէին նայել:

Հարցս հնչեցնեմ, այն վերաբերում է Արզումանյան 10 հասցեին: Գիտեմ, որ խնդիրները շատ են, բնակչության կողմից անհամաձայնություն կա և քաղաքաշինության կոմիտեն ևս միջամտել է, սակայն խնդրում եմ ներկայացնել այդ խնդրի լուծման համար կա արդյոք տեսանելի ժամանակացույց:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն: Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Պարո՛ն Խաժակյան, վստահեցնում եմ ևս մեկ անգամ, որ հետևում ենք եկամուտներին, այլապես այդ եկամուտները չէին հավաքագրվի: Ինչ վերաբերում է գույքի օտարումներին, ապա պլանավորված է եղել 525 մլն. և հավաքագրվել է 329 մլն.: Այստեղ ևս 50 միլիոնը հնարավոր չէ դուրս բերել թվերով, բայց թերհավաքագրումներ տարբեր հոդվածներով միշտ կարող են լինել և պետք է լինեն, որովհետև խոսում ենք պլանավորման և փաստացի իրականության տարբերությունների մասին. վերջնական արդյունքը՝ լիարժեք հավաքագրում է ընդհանուր պլանավորած եկամուտների:

Ինչ վերաբերում է Արզումանյան փողոցի 10-րդ շենքին, ապա այստեղ ևս իրավիճակն ուղղակիորեն կոռելացված է բնակիչների վարքագծի հետ: Հիշեցնեմ, քանի որ 4-րդ կարգի վթարայնության բազմաբնակարան երկու՝ 10-րդ և 17-րդ շենքերի հետ կապված, քաղաքը որդեգրեց համայնք-մասնավար համագործակցության մոդելը, և մենք, վստահեցնում եմ, քաղաքապետարանի աշխատակազմի շինբարեկարգման վարչության և վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ ձեռք բերեցինք համաձայնություններ երկու կառուցապատողների հետ: Ընդ որում՝ բանակցություններ էին եղել մեծ քանակի սուբյեկտների հետ, որոնք համաձայնեցին այս շենքերի քանդման, բնակիչների վերաբնակեցման, վարձով պահման և նոր շենքի կառուցման ու նույնանման քառակուսի մետրերով և վերանորոգված բնակարանների հանձնման մեր առաջարկին:

Ինչպես իրականությունն է ցույց տալիս, բնակիչների համար այդ պայմանն այդքան էլ ընդունելի չէր և վերջիվերջո մինչ մենք այս բանակցությունները կտանեինք, մի քանի հանդիպումներ բնակիչների հետ, կառուցապատողը հրաժարվեց գործընթացը շարունակել: Իրականում այնպես էր ստացվել, որ մի քանի հարցերով մեր բանակցությունների արդյունքում իրական բիզնես եկամտաբերությունը՝ շենքի 30%-ը քաղաքին հետ

վերադարձնելու այս վերաբնակեցման նպատակով, այդ բիզնես ծրագիրը կառուցապատողին բավական սահմանային եկամտաբերության էր բերել և վերջին հաշվով հրաժարվեցին:

Այս պահին այնտեղ համեմատաբար վատ վիճակ է շենքի 3-րդ մուտքում, և բնակիչները՝ վստահ լինելով, որ իրենց շենքը 3-րդ կարգի վթարայնության է ոչ թե՝ 4-րդ, սկզբում բավական կոպիտ հրաժարվեցին ամեն ինչից՝ ասելով, որ իրենց կյանքում ամեն ինչ նորմալ է, չեն ուզում տեղափոխվել: Ստիպված էինք ևս մեկ անգամ դիմել սեյսմիկ գնահատման, որի արդյունքները հավաստեցին մեր մտավախությունները, որ ամբողջ շենքը՝ երեք մուտքերով, 4-րդ կարգի վթարային են: Այս իրավիճակում, այնուամենայնիվ, շենքում կան բնակիչներ, ովքեր հրաժարվում են բնակարանները լքել և պահանջում են այսօրևեթ տեղափոխվել սեփականության իրավունքով իրենց տրվող բնակարան, ինչը քաղաքի տնօրինման տակ չկա: Միակ տարբերակը բնակիչների համբերատարությանն ապավինելն է և սպասել մինչև քաղաքն ունենա համապատասխան բնակարանային ֆոնդ կամ կվերադառնանք նախորդ մոդելին, որ բնակիչներին առաջարկվում էր անվճար տեղափոխվել բարվոք վիճակում գտնվող այլ բնակարաններ՝ նույն քառակուսի մետրին և նույն բարեկարգ վիճակին համապատասխան, մինչ այն պահը, երբ քաղաքը նրանց կապահովի նոր բնակարաններով: Շնորհակալությու՛ն:

Դավիթ Խաժակյան

-Ինչ վերաբերում է կատարումներին, խոսում եմ ոչ թե առանձին հոդվածի մասին, առանձին հոդվածներում էլ ունեք թերակատարումներ, սակայն այդ մասով չեմ խոսում, համեմատում եմ բացարձակ թիվը 2018թ. և 2019թ. առաջին եռամսյակները: Ընդ որում՝ ասեմ, որ տեղական տուրքերի և վճարների մասով մարդիկ այդքան աշխատեն, գումարն ավելացնեն, դուք մյուս մասով այնքան թերակատարում անեք, որ բացարձակ թվով, կրկնում եմ, 50 քանի միլիոն, այդ թերակատարումն ապահովվի: Բացարձակ թվեր են, պատրաստ եմ համակարգչիս վրա ցույց տալ, պարզապես մտածում էի Դուք դա ինձնից մի քանի անգամ լավ կիմանաք:

Հաջորդ հարցս վերաբերում է քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող կանաչապատման ՓԲԸ-ներին: Ես հաճախ փորձում եմ էլեկտրոնային «armmaps» եղանակով հետևել, թե որ մրցույթը կայացավ, որը չկայացավ և այս մասով թարմացումներ չկան: Սակայն պարբերաբար տեսնում եմ, որ քաղաքապետի որոշումներով անընդհատ գումար է տրվում տվյալ կազմակերպություններին: Խնդրում եմ պարզաբանել, ի վերջո այդ մրցույթները կայացե՞լ են, թե՝ ոչ և, եթե այո, ինչու՞ ենք անընդհատ, առանձին որոշումներով գումարը փոխհատուցում:

Հայկ Մարության

- Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն, պարոն Խաժակյան, մեր երկու վարչական շրջանում չեն կայացել մրցույթները, այն պատճառով, որ այն ընկերությունները, որոնք դիմել են մրցույթին և մասնակցել, պետական բյուջեի նկատմամբ ունեցել են հարկային ապառքներ, որոնք հանդիսանում են մրցույթի մասնակցության համար իրավական խոչընդոտող: Դրա արդյունքում նրանց մրցույթին մասնակցությունը կասեցվել է: Այս երկու վարչական շրջանի կանաչապատման մրցույթները կրկնակի դրվել են մրցույթի, և դրանք շահել են այլ բաժնետիրական ընկերություններ, այդ թվում նաև ընկերություններ, որոնք սպասարկում են մեկ այլ վարչական շրջան:

Ինչ վերաբերում է քաղաքապետի կարգադրությամբ տրամադրվող սուբսիդիաներին, ապա այդ ՓԲԸ-ները, որոնք նախորդ տարիներին իրականացրել են կանաչապատումները և այս տարի չեն կարողացել մասնակցել այդ մրցույթներին և հաղթել, այնուամենայնիվ, ունեն աշխատակազմ, որի նկատմամբ ընկերությունը ձևավորել էր աշխատավարձի գծով պարտքեր: Քաղաքապետարանը, որպես միակ 100% բաժնետեր, պարտավորություն է կրում իր ենթակայության տակ գտնվող բաժնետիրական ընկերության կողմից վարձված աշխատակիցների նկատմամբ և քաղաքապետի կարգադրությամբ նրանց նկատմամբ ֆինանսական պարտավորություններն են կատարվել: Դա կշարունակվի մինչ այն պահը, երբ այդ ընկերության աշխատակիցները, ովքեր արդեն իսկ ծանուցվել են օրենքով նախատեսված կարգով նախնական երկամսյա ժամկետի ծանուցմամբ, կազատվեն աշխատանքից՝ փակ բաժնետիրական ընկերության գործունեության դադարման հիմքով: Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Լյուդմիլա Սարգսյան, խնդրե՛մ:

Լյուդմիլա Սարգսյան

-Երևան քաղաքը բազմաթիվ խնդիրներ ունի, որոնց մեծ մասը երկարաժամկետ լուծումներ են պահանջում, բայց կան նաև խնդիրներ, որոնք կարելի է մեկ-երկու օրվա ընթացքում կարգավորել, բայց չգիտես ինչու այդ հարցերը չեն բարձրաձայնվում: Չնայած պետք է ասեմ, որ մեզնից շատերը ամեն օր այդ խնդրին առնչվում են: Խոսքը վերաբերում է Մյասնիկյան պողոտային և Նորքից իջնող ճանապարհին: Բոլորս ամեն օր ականատես ենք լինում այնտեղի խցանումներին և գիտենք ինչն է այդ խցանումների և մեքենաների իրար բախման իրական պատճառը: Միգուցե մի քիչ ճիշտ չձևակերպեցի մեքենաների հարցով:

Խնդիրն իրականում ստեղծում են Հերացու փողոցում Հայ-ամերիկայն բժշկական կենտրոնի հարակից տարածքում երեք շարքով կանգնող մեքենաների շարասյունը: Որքան գիտեմ մեկ շարքից ավելի կայանատեղում կանգնելու իրավունք չկա, եթե սխալ եմ ճշտեք: Ամեն դեպքում այդ կայանատեղի պատճառով ամբողջ Մյասնիկյան պողոտան և Նորքից իջնող ճանապարհը խցանվում է և մարդիկ կես ժամով, 20 րոպեով ստիպողաբար ուշանում են և՛ աշխատանքից, և՛ ուսումնական կենտրոններից, նյարդային վիճակ է ստեղծվում, վթարային իրավիճակ է ստեղծվում:

Կարծում եմ, որ քաղաքապետարանի և ճանապարհային ոստիկանության համատեղ աշխատանքի արդյունքում կարելի է այդ խնդիրը շատ արագ կարգավորել: Այնտեղ ճանապարհային ոստիկանն ընդամենը պետք է հետևի, որպեսզի մեքենաները երկրորդ, երրորդ շարք չկանգնեն: Այդ խնդիրն ընդամենը մի քանի օրում կարելի է լուծել, սակայն տարիներ շարունակ տառապում ենք: Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, մոտավորապես 3 ամիս առաջ այս հարցը և՛ մենք էինք բարձրացրել, և՛ ճանապարհային ոստիկանությունը: Այս հարցը շտկելու ուղղությամբ աշխատանքային խումբ է ստեղծվել, ունեին առաջարկներ, որոնք պետք է ի կատար ածվեին: Կարող եմ ասել, որ այս խնդիրը ճանապարհային ոստիկանության դաշտում է, բայց, համենայնդեպս, այդ մասով նրանց հետ աշխատում ենք: Ճիշտ եք ասում, պետք է թույլ չտան երկրորդ, երրորդ շարքով կանգնել, այդքանով հարցը կլուծվի: Շատ հաճախ ոստիկանության դերը չենք կարող կատարել:

Ասեմ ավելին՝ իմ կողմից առաջարկություն է եղել ստեղծել քաղաքային ոստիկանություն և այդ դեպքում այս ամենն արդեն մեր դաշտում կլինի և վստահ եմ ավելի արդյունավետ կաշխատենք: Սակայն օրենքը դեռ փոփոխված չէ, և քաղաքը չունի իր ոստիկանությունը, որը կզբաղվի ավտոկայանատեղի, աղբահանության, չնախատեսված վայրում փողոց անցնելու և մյուս հասարակ հարցերով: Այսինքն, այն հարցերով ինչով պետք է զբաղվի քաղաքային ոստիկանությունը և շատ հարցեր շատ ավելի արագ կլուծվեն: Այս դեպքում գերատեսչությունների միջև նամակագրությունները շատ ավելի բարդացնում են այդ աշխատանքը: Կրկնում եմ նորից, սա մեր դաշտում չէ:

Լյուդմիլա Սարգսյան

-Պարո՛ն քաղաքապետ, ես գիտակցում եմ, որ սա քաղաքապետի պարտավորությունների մեջ չի մտնում, բայց իրականում այդ իրավիճակը Երևանում է: Ինչու էի ասում համառության և հետևողականության արդյունքում խնդիրը կլուծվի, ես կարծում եմ, որ հարկավոր է ավեի շատ համառություն և հետևողականություն դրսևորել և ուղղակի

պահանջել ճանապարհային ոստիկանությունից, որ այդ հարցը կարգավորեն, քանի որ հազարավոր մարդիկ են այդ խնդրի հետ առնչվում:

Հայկ Մարության

-Ձեզ հետ համաձայն եմ, պարբերաբար որոշ խնդիրների վրա ճանապարհային ոստիկնության ուշադրությունը հրավիրում ենք, անկեղծ ասած, չեմ ուզում վատաբանել մեր գործընկերների աշխատանքը, բայց շատ հարցեր կան, որտեղ թերանում են: Այստեղ ունենք տարաձայնություն՝ իրենք առաջարկում էին մայթը փոքրացնենք, դրանով իսկ ավելի լայնացնենք ավտոմեքենաների կայանման տեղը: Մենք հրաժարվեցինք, ասացինք, որ գնում ենք ուրիշ ճանապարհով, ուզում ենք մայթերը լայնացնել, քաղաքն ավելի շատ դարձնել հետիոտների, քան ավտոմեքենաների համար: Շահերի բախում տեղի ունեցավ, մենք նրանց առաջարկը չընդունեցինք և այս երևույթի կարգավորումն ամբողջովին մնաց նրանց տիրույթում: Այո՛, վստահ եմ, որ միգուցե մայթերը նեղացնեինք այդ հարցին որոշակի լուծում տրվեր, սակայն մոտեցման հարց է: Համենայնդեպս՝ ևս մեկ անգամ ուշադրություն կդարձնենք: Շնորհակալությու՛ն:

Լյուդմիլա Սարգսյան

-Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սաթենիկ Մկրտչյան, խնդրե՛մ:

Սաթենիկ Մկրտչյան

-Հարցս վերաբերում է հանրակրթական հաստատությունների ջերմային ռեժիմին: Ճիշտ է հիմա ամառ է՝ մոտալուտ ժամանակներս, բայց նորից գալու է ձմեռ ու մենք պետք է այդ լուծումները փորձենք վերջնական տալ: Խնդիրն այն է, որ կա առողջապահության նախարարության նորմ, որը սահմանում է միջին ջերմաստիճան՝ 18-21^{0}C Երևան քաղաքի համար: Մյուս կողմից, հավանաբար, կա իներցիայով շարունակվող ջեռուցման սեզոն հասկացությունը: Այս երկուսի անհամաձայնության արդյունքում և՛ ձմռան սկզբերում, և՛ դեպի գարուն, երբ անսպասելիորեն ցրտեց եղանակը, խնդիրներ ունեցանք հիմնականում հանրակրթական դպրոցներում, նաև մանկապարտեզներում, բայց ավելի հեշտ կարգավորելի, երբ շատ տեղերում ուղղակի այդ ջերմային ռեժիմի 18^0 չէին կարողանում ապահովել: 155 դպրոց, 160 մանկապարտեզ՝ ահռելի թիվ է և այնպես չի, որ բոլոր տեղերում նույնն է խնդիրը, տարբեր իրավիճակներ են, թե ինչու է այդպես: Մի մասում ընդհանրապես շենքային պայմաններն են և ջերմամեկուսացման արդյունքում ջերմության կորուստ է իրականում տեղի ունենում, մյուս մասում գուցե ֆինանսական է, որովհետև փոքր է դպրոցը և քիչ է ֆինանսավորվում, մյուս մասում ուղղակի գուցե և տնօրենի կամքի և ոչ այդքան մեծ դեր

տալու ջերմային ռեժիմի 18⁰-ին, այսինքն խնդիրները տարբեր են: Ինչու եմ հիմա այս հարցը տալիս, որովհետև գալու է նորից ձմեռ և դրան պետք է պատրաստվել: Արել եք արդյոք որևէ ցուցակագրում այն խնդիրների, այսինքն՝ դպրոց առ դպրոց, մանկապարտեզ առ մանկապարտեզ, որպեսզի մենք հասկանանք և հանրությանն էլ շատ հստակ բացատրենք, թե որ հաստատություններում են այդ կառուցվածքային և օբյեկտիվ խնդիրները, որի արդյունքում մենք 18⁰-ը դժվարությամբ ենք կարողանում ապահովել և անընդհատ պետք են տեղային լուծումներ: Ինչպես նաև պարզենք, թե որ հաստատություններն են, որտեղ խնդիրը սուբյեկտիվ կարող է լինել, եթե այդպիսի խնդիր կա:

Այդ ցուցակի պարագայում կարծում եմ, որ կարիք կա ինչ-որ աշխատանքային խումբ ունենալ, հասկանալ խնդիրը, որպեսզի մինչև ձմեռվա սեզոն հնարավոր լինի ապահովել այդ 18⁰-ի առկայությունը: Ինչու եմ այսպես նշում, որովհետև ձմռանը և ցուրտ գարնան առաջին մի քանի օրերին, մեր խմբակցությունում ավագանու անդամներով մի փոքր թեժ խումբ ունեինք՝ թեժ գծի, որով փորձում էինք արձագանքել, գնալ, տեսնել, անձամբ հասկանալ թե ինչն է խնդիրը:

Այնուամենայնիվ՝ կարծում եմ, որ այստեղ լրացուցիչ ջանքի կարիք կա՝ իրավիճակը հստակ իմանալու և հանրությանը, ծնողներին, ուսուցիչներին, տնօրեններին հստակ ասելու, որ խնդիր չկա, այսինքն պարտավոր է լինել այդ 18⁰: Այն դեպքերում, որտեղ կան օբյեկտիվ խնդիրներ՝ շենքային պայմաններ, կաթսայատան խնդիրներ և տարբեր այլ օբյեկտիվ խնդիրներ, դրանց մասով ստեղծվեն ինչ-որ ընթացիկ լուծումներ, որպեսզի ձմռանը այդ 18⁰-ի խնդիրը ոչ մի հաստատությունում չունենանք կամ ավելի պատրաստ լինենք այդ վիճակին:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը, խնդրե՛մ:

Տիգրան Վիրաբյան

-Շնորհակալությու՛ն, տիկին Մկրտչյան ստիպված եմ մեր առանձնազրույցը գաղտնազերծել, որովհետև մենք 1 ժամ այս հարցի շուրջ առանձին խոսակցություն ենք ունեցել, բոլոր մոտեցումների մասին, բայց պատրաստ եմ նաև հանրային պատասխանել հարցին: Ստեղծված իրավիճակում բոլոր դպրոցները, որտեղ եղել են խնդիրներ հաշվի է առնվել, թե արդյոք խնդիրներն առաջացել են անհնարինության տեսանկյունից, թե ոչ ճիշտ պլանավորման տեսանկյունից: Այն դեպքերը, որոնք ունեցել են անհնարինություն և տնօրենն ի վիճակի չի եղել լուծում տալու, մեր կողմից ավելի մեղմ մոտեցում է եղել, փորձել ենք խնդիրներն ուսումնասիրել, գույքագրել, հետագայում նման խնդիրների չբախվելու համար:

Այն դեպքերում, երբ ուղղակի ոչ ճիշտ պլանավորումից, ոչ ճիշտ կառավարումից է դուրս եկել, այդ հաստատությունների ղեկավարներն ստացել են նկատողություններ և մեր դիրքորոշումն իրենց աշխատանքի նկատմամբ հայտնել ենք իրավական ձևաչափով: Հիմա քննարկումների փուլում ենք, որպեսզի կարողանանք հասկանալ, թե արդյոք որ կառույցներում ինչ խնդիրներ ունենք:

Բոլորս էլ շատ լավ գիտենք, որ և՛ հանրակրթական դպրոցների մեծ մասը, և՛ մանկապարտեզներն ունեն ջերմամեկուսացման լուրջ խնդիր: Գիտենք, որ ունենք մանկապարտեզներ և դպրոցներ, որոնք միևնույն կաթսայատնից են սնվում: Այդ մանկապարտեզում ուզենք, թե չուզենք այլ տարբերակներով են ջեռուցում ապահովում, քանի որ կաթսայատունը բավական հեռու է և մինչև տաք ջուրը հասնում է մանկապարտեզ, արդեն կորուստ ենք ունենում: Այդ պարագայում մտածում ենք իզոլացման որոշակի համակարգեր, որպեսզի կարողանանք ջերմաստիճանը բարձրացնել:

Մի խոսքով՝ բոլոր դեպքերի մասով խորքային ուսումնասիրություն ենք տանում: Ցանկանում եմ Ձեզ հավաստիացնել, որ ինչ հնարավորությունների և լիազորությունների տիրույթ, որ մենք ունենք խնդիրը լուծելու, փորձում ենք լուծել: Գիտենք նաև, որ մեր լիազորությունները ֆինանսական առումով, հանրակրթական դպրոցների խնդիրները փորձել լուծելու առումով մեծ չեն: Գույքագրված խնդիրները կուղղենք այն կառույցներին, որոնք գոնե այս առումով տեղյակ կլինեն թե ինչ է կատարվում, իսկ մանկապարտեզների ծրագրի մասին չեմ կարծում թե ևս մեկ անգամ առիթ կա խոսելու: Կան մանկապարտեզներ, որոնք հիմնանորոգվում են, իսկ այն մանկապարտեզները, որոնք չեն հիմնանորոգվում մեր հնարավորությունների սահմաններում փորձում ենք մինիմալ լուծումներ գտնել, որպեսզի ձմեռային շրջանում կարողանան համապատասխան ջերմությունն ապահովել:

Հիմա այստեղ ասենք, որ բոլոր հանրակրթական դպրոցներում և մանակապարտեզներում միայն լոկալ ջեռուցման համակարգով 2020թ. ձմռանը կունենանք վերջնական լուծում, դա ինձ թվում է իրատեսական չէ խոստանալը: Այդ խնդիրը պետք է տարիների ընթացքում լուծենք, որովհետև այդ խնդիրը երկար տարիներով եկել է: Երկար տարիներ մանկապարտեզներն այլ տարբերակներով են փորձել համապատասխան ջերմությունն ապահովել:

Մի բան էլ եմ ցանկանում ամրագրենք, որ չենք կարող ուղղակի պահանջել տնօրենից ապահովել այդ ջերմաստիճանը և պատժել տնօրենին, որ չի ապահովել, եթե նրան համապատասխան պայմաններ չենք տվել: Այս պարագայում առաջնային պետք է առաջնորդվենք, որ բոլոր համապատասխան պայմանները տանք ջերմություն ստանալու համար, չկատարելու դեպքում նոր պահանջենք: Այս պարագայում մենք նույնպես

կաշկանդված ենք: Ինձ թվում է մինչև ջեռուցման մյուս սեզոնի սկսվելը կկարողանանք բոլոր խնդիրները գույքագրած և հնարավորության դեպքում նաև լուծումներ տված լինել:

Սաթենիկ Մկրտչյան

-Շնորհակալությու՛ն սպառիչ պատասխանի համար: Իմ ասածն էլ հիմնականում հենց դա էր, որ ունենանք հստակ ցուցակագրած և հանրությանը հասանելի ուղերձ: Շատ հաճախ դեպքեր են լինում, որ սուբյեկտիվ է խնդիրը, բայց ներկայացվում է օբյեկտիվ: Այդ մասով կարծում եմ, որ ձմռան սեզոնին ընդառաջ անպայման պետք կլինի շատ հստակ, գուցե ցուցակով, դպրոցների ցանկ լինի, որպեսզի թյուրիմացություններ չլինեն: Հանրային ընկալման մասով էլ շատ հետաքրքիր բաներ բացահայտվեց, որ շատ հաճախ այդ 18^0 ջերմաստիճանը նույնիսկ կրթության կազմակերպիչների կողմից լուրջ չի ընկալվում: Ծնողներն էլ համարում են, որ ամոթ է, եթե իրենք ինչ-որ ձև բարձրաձայնում են այդ խնդիրը: Կարծում եմ, որ մենք, քաղաքապետարանը, դպրոցի տնօրինությունը, ծնողները և ամբողջ հանրությունը պիտի այս ուղղությամբ չգնա, այլ հասկանա, որ այդ 18^0-ը մինիմալն է, որ պետք է լինի: Եթե չի լինում, ապա մենք պիտի ինչ-որ ձև արդարանանք, թե ինչու չի լինում, ոչ թե մտածենք՝ ինչ կա որ բողոքում են: Ես չեմ ասում, որ սա համատարած է, բայց մեր այցերի և ուսումնասիրությունների ընթացքում այսպիսի միտում ենք նկատել: Կարծում եմ, որ պետք է հանրությունն այս ուղղությամբ այս տեսանկյունից նայի՝ ոչ թե ջեռուցման սեզոնի, այլ 18^0-ի:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԼՈՒՅՍ խմբակցության անդամ Թեհմինա Վարդանյան, խնդրե՛մ:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն քաղաքապետ, առաջին հարցս ուղղված է Ձեզ, շատ կարճ հարց և ակնկալում եմ շատ կարճ պատասխան: Տեղյա՞կ եք, որ քաղաքացիների կողմից անձամբ Ձեզ հասցեագրված նամակները, որոնք իրենց մեջ նաև պարունակում են այլ անձի հետ կապված վատաբանում, ուղարկվում են քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկներ և այնտեղ հրապարակվում:

Տեղյակ եք, որ Ձեզ ուղղված քաղաքացու նամակն ուղարկվում է այլ տեղ և հրապարակվում: Քաղաքացին հաջորդիվ Ձեզ նամակ գրելուց մտավախություն է ունենալու, որ կարող է որևէ մեկը, որևէ տեղ բարձրաձայն այն ընթերցի:

Հայկ Մարության

-Ո՛չ, տեղյակ չեմ և այդպիսի բան չպետք է, որ տեղի ունենա:

Թեհմինա Վարդանյան

-Անչափ շնորհակալ եմ անկեղծ պատասխանի համար: Ես Ձեր ասածին չեմ արձագանքում, կարիք չեմ տեսնում, շնորհակալ եմ:

09.04.2019թ. առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը քաղաքապետարանի բլանկի վրա թիվ 19 պոլիկլինիկայի տնօրեն Սամվել Սարգսյանին է ուղարկում քաղաքացի Սպարտակ Ասոյանի կողմից ուղղարկված նամակը, որն ուղղված էր Ձեզ: Ես նամակը Ձեզ կտրամադրեմ, պատճեններն ունեմ, ինձ բազմաթիվ աշխատակիցներ են ուղղարկել: Նամակում, վերը նշված անձը՝ Սպարտակ Ասոյանը, պատմում է իր կյանքի պատմությունը, հեղափոխական տրամադրությունները, իր զարմանքը Ձեզ բեմահարթակում տեսնելուց, սա կարդում եմ, որովհետև բառացի ցիտում եմ, իր զարմանքը Ձեզ քաղաքապետ ընտրվելուց տեսնելուց և այլն, 4-5 էջանոց նամակ է: Ասում է նաև, որ չէր գրի այս երկտողը, եթե լուրերով չտեսնեի, որ մի ընկերուհի, այստեղ խոսքը գնում է իմ մասին, ով պատահաբար Նիկոլ Փաշինյանի շնորհիվ հայտնվել է այստեղ, խոսում է պոլիկլինիկայի մասին և ինչ-որ մարդկանց պատվերներ կատարում: Մեր հարգելի քաղաքացուն այս պահին ցանկանում եմ տեղեկացնել, որ հաստատ ես չեմ այն անձը, ով պարոն Փաշինյանի շնորհիվ հայտնվել է այս դահլիճում:

Այստեղ խոսքը չի գնում իմ մասին կամ ավագանու անդամի մասին: Քաղաքացու վատաբանող նամակը, որ վերջին մի պարբերությունում է գրված, մեր պարոն Բաբինյանը քաղաքապետարանի բլանկի վրա ուղարկում է թիվ 19 պոլիկլինիկայի տնօրեն Սամվել Սարգսյանին և գրում. «Հարգելի պարոն Սարգսյան, Ձեր տնօրինությանն է ուղարկվում քաղաքացի Սպարտակ Ասոյանի շնորհակալական նամակի պատճենը: Առաջարկում եմ Ձեզ ընթերցել և մասսայականացնել կոլեկտիվում: Այս ամենից հետո տնօրենը նույն օրը 2 անգամ, 2 հերթով հրավիրում է ժողով և բարձրաձայն ընթերցում այլ անձին վատաբանող, քաղաքապետին ուղղված նամակը: Խնդրում եմ առողջապահության վարչության պետ պարոն Բաբինյանին պարզաբանել այս հարցը:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի առողջապահության վարչության պետ Կամսար Բաբինյանը:

Կամսար Բաբինյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար տիկին Վարդանյան: Դուք եթե կարդում եք նամակը, խնդրում եմ մինչև վերջ ասեք նամակի բովանդակության մասին: Նամակում քաղաքացին իր գոհունակությունն է հայտնում թիվ 19 պոլիկլինիկայի սպասարկման վերաբերյալ: Այդ բովանդակությունն է ուղարկվել պոլիկլինիկա կարդալու համար:

Ցանկանում եմ Ձեզ տեղյակ պահել, որ տարբեր նամակներ ենք ստանում Երևանի քաղաքապետարանի ենթակայության հիմնարկների վերաբերյալ, որտեղ մարդիկ խնդրում են իրենց շնորհակալությունը հայտնել այս կամ այն հիմնարկում իրենց լավ բուժման համար: Այդ բոլոր նամակները հասցեագրում ենք տվյալ բուժհիմնարկներ:

Խնդրում եմ հաշվի առնեք, որ այստեղ խոսքը չի գնում միայն թիվ 19 պոլիկլինիկայի մասին: Ես կարող եմ Ձեզ ցույց տալ, թե ինչքան նամակ ենք ստացել այս կամ անցյալ տարվա ընթացքում, որտեղ մարդիկ իրենց շնորհակալությունն են հայտնում: Կան նաև նամակներ, որտեղ մարդիկ իրենց դժգոհությունն են հայտնում:

Թեհմինա Վարդանյան

-Պարո՛ն Բաբինյան, կարծում եմ, այսուհետ չպետք է լուրջ վերաբերվեմ Ձեր այն արտահայտություններին, որոնք արվում են կուլիսներում, դա թող մնա մեր գաղտնիքը, սա մեկ: Երկրորդը՝ ևս մեկ անգամ շեշտում եմ այլ անձի մասին վատ տեղեկատվություն պարունակող, վատաբանող նամակն ուղղված քաղաքապետին, այսինքն՝ ցանկացած քաղաքացի ինչ գրի քաղաքապետին, դա տարածվելու է:

Ձեզ եկել է այլ պարունակությամբ ևս մի նամակ, որի օրինակն էլ են ուղարկել, ծրարն ինձ մոտ է: Ուղարկել եք արդյոք թիվ 19 պոլիկլինիկային այդ նամակը և արդյոք այնտեղ բարձրաձայն ընթերցվել է այն: Ինչ է նշանակում քաղաքապետարանի առողջապահության վարչության պետն առաջարկում է ընթերցել և մասսայականացնել կոլեկտիվում, սա ինչ երկակի խաղեր են, պարոն Բաբինյան: Այս պահին, իհարկե, քաղաքապետի պատասխանն ինձ լրիվ բավարարեց, որ առհասարակ տեղյակ չի:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցի մասին պարզաբանումներ կներկայացնի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը:

Սերգեյ Հարությունյան

-Պարո՛ն Մարության, ես պարզապես ավելացնեմ հետևյալը. կա պրակտիկա, որ բոլոր բուժհաստատություններին երբ գրում են շնորհակալական նամակներ, դրանք միշտ ուղարկվում են տվյալ հաստատության գլխավոր բժշկին, որպեսզի ընթերցվեն: Հիմա քանի որ բազմաթիվ են բողոքներն ամեն տեղ, այս ամենի նպատակն այն է, որպեսզի կոլեկտիվը հասկանա, որ միայն բողոքներ չեն լինում, կան մարդիկ, ովքեր չեն զլանում և շնորհակալություն են գրում:

Ինչ վերաբերում է բողոք պարունակող նամակներին, որոնք ուղղված են Ձեզ, ամբողջ փոստը, բնական է, գալիս է Ձեր անունով: Այն նամակները, որոնց մեջ կան քրեածին տարրեր, Ձեր գիտությամբ, ուղղարկվում են ոստիկանություն կամ դատախազություն: Այն

նամակները, որտեղ պարզաբանման կարիք կա անմիջապես բուժհաստատության ղեկավարից, հրավիրվում է այստեղ և՛ մեղավորը, և՛ տվյալ հիմնարկի ղեկավարը:

Երկու օր առաջ ստացել եմ մի նամակ թիվ 19 պոլիկլինիկայի ակնաբույժից, հրավիրել ենք իրեն այստեղ քննարկման: Քանի որ այդտեղ քրեական գործ կար, ես խոսել եմ նաև քննչական կոմիտեի վերահսկողության վարչության պետի հետ և այդ նամակը ուղարկվել է իրենց: Բուժհաստատություն այդ նամակը չի գնացել, քանի որ կասկած կա, որ քրեածին էլեմենտներ կան նամակի բովանդակության մեջ: Քննչական կոմիտեն, երբ թույլ կտա, այդ ժամանակ կդիմենք հաստատության պարզաբանմանը:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն պարոն Սարգսյան: Պարոն Խաչատրյան կասեք քանի նամակ եմ ստանում օրական:

Վահե Խաչատրյան

-Պարո՛ն Մարության, օրական շուրջ 400 նամակ:

Հայկ Մարության

-Շուրջ 400 նամակ եմ ստանում օրական, բնականաբար, անձամբ չեմ կարող ընթերցել այդ 400 նամակը, տիկին Վարդանյան: Դրա համար կա աշխատակազմի ղեկավար, կան համապատասխան վարչություններ և աշխատակիցներ, ովքեր այս գործառույթն իրականացնում են: Բնական է, երբ քաղաքապետարան են ուղղում նամակը, գրում են քաղաքապետի անունով:

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության ղեկավար Միքայել Մանրիկյան, խնդրե՛մ:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալությու՛ն: Նախքան հարցիս անցնելը՝ կցանկանայի դարձյալ Ավան վարչական շրջանի ղեկավարից ճշտել. Պարոն Դանիելյան՝ Դավիթ Սասունի Պողոսյանը Ձեզ մոտ աշխատու՞մ է:

Արա Դանիելյան

-Այո՛, իմ տեղակալն է:

Միքայել Մանրիկյան

-Շնորհակալությու՛ն, անցնեմ բուն հարցիս: Շատ զարմանալի է, պարոն Դանիելյան, լինելով ոստիկանության նախկին աշխատող, ցավոք Դուք կադրային սխալ քաղաքականություն եք վարում: Կարդում եմ «DataLex»-ից վերցրած նյութը. «Դավիթ Սասունի Պողոսյանին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և նրան դատապարտել ազատազրման 4 տարի ժամկետով՝ առանց գույքի

բռնագրավմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 69-րդ հոդվածի համաձայն՝ նշված պատժին հաշվակցել Դավիթ Սասունի Պողոսյանին 2012թ. ապրիլի 4-ից մինչև 2012թ. մայիսի 4-ը կալանքի տակ պահելու ժամկետը և նրա նկատմամբ վերջնական պատիժ նշանակել ազատազրկում 3 տարի 11 ամիս ժամկետով»: Ասեմ, որ տվյալ քրեական գործն իրենից ներկայացնում է գողություն, որը կազմակերպվել է հանցավոր խմբի շրջանակներում: Խնդրում եմ այս հարցի շուրջ պարզաբանում ներկայացնել:

Հայկ Մարության

-Պարո՛ն Դանիելյան, խնդրե՛մ: Պարո՛ն Մանրիկյան, խնդրում եմ զերծ մնալ նման որակավորումներ տալուց: Շնորհակալություն:

Արա Դանիելյան

-Պարո՛ն քաղաքապետ, Դավիթ Պողոսյանը նշանակվել է օրենքի սահմանում: Ըստ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի՝ դատվածությունը հանված է: Ներկայումս Դավիթ Պողոսյանը, բացի այն որ աշխատում է վարչական շրջանի ղեկավարի տեղալ, Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության մաթեմատիկական մոդելավորման ամբիոնի հայցորդ է: Վերջին երկու տարին՝ 2016-2018թթ. աշխատել է տնտեսկան զարգացման և ներդրումների նախարարությունում: Ավարտել է բժշկական համալսարանը, բարձր գիտելիքների տեր է, և շատ գոհ եմ նրա աշխատանքից: Ստուգել եմ նաև ոստիկանության լրատվական կենտրոնի տվյալները և դատվածություն ցույց չի տալիս, մաքուր է:

Հայկ Մարության

-Այսինքն՝ մարվա՞ծ է դատվածությունը: Եթե չեմ սխալվում, օրենքը թույլ է տալիս նաև ԱԱԾ-ում աշխատել:

Արա Դանիելյան

-Այո՛, օրենքը թույլ է տալիս աշխատել ոստիկանությունում և ազգային անվտանգությունում:

Միքայել Մանրիկյան

-Երևույթը, պարոն՛ Դանիելյան, բնակիչների արձագանքն այդ ամենի մասին: Բարձրագույն կրթությունով ցմահ դատապարտյալներ կան, այսինքն, եթե ունի բարձրագույն կրթություն, ուրեմն դա հիմնավորում է նրա աշխատանքը:

Հայկ Մարության

-Այսինքն, եթե մարդը դատվել է և դատվածությունը մարված է, Դուք կոչ եք անում բոլոր պետական մարմիններին, որպեսզի այդ մարդկանց աշխատանքի չընդունե՞ն: Ուղղակի ուզում եմ Ձեր խմբակցության ուղերձը հասկանալ:

Միքայել Մանրիկյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարցը վերաբերում է ոչ թե աշխատանքի չընդունելուն, կարծում եմ վարչական շրջանի ղեկավարի տեղակալի պաշտոնը նման մարդկանց համար շատ բարձր է:

Հայկ Մարության

-Ես կխնդրեմ սա ընդունել որպես Ձեր խմբակցության դիրքորոշում:

Միքայել Մանրիկյան

-Սա անձամբ իմ դիրքորոշումն է՝ որպես ՀՀ քաղաքացի:

Հայկ Մարության

-Այսինքն՝ այն մարդկանց ովքեր դատվածություն ունեն և մարվել է, չընդունե՞ն պետական մարմին աշխատանքի: Շնորհակալությու՛ն, կընդունենք ի գիտություն, չնայած՝ մեր դիրքորոշումն այլ է: Իմիջիայլոց, եթե ցանկանում եք, կարող եք խմբակցությունով օրենքի փոփոխության դիմել:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լիլիթ Պիպոյան, խնդրե՛մ:

Լիլիթ Պիպոյան

-Հարգելի՛ ներկաներ, ինձ եկել է մի նամակ-բողոք, որին արձագանքելու լավագույն ձևը, կարծում եմ, այստեղ այն բարձրաձայնելն է: Սա ավելի շատ խնդրանք-հորդոր է լինելու, դիմում եմ քաղաքապետարանին և համապատասխան վարչություններին, որոնք երևի կզբաղվեն այս հարցով: Սամվել Մկրտչյան անունով քաղաքացի է ինձ գրում, այն մասին, որ իրեն դեռևս 1991թ. Շենգավթի կոլտնտեսությունը վարձակալության է տվել մոտ 4000 քմ հողատարածք: Նա այդ վարձակալությունը շարունակել է արդեն վարչական շրջանի ղեկավարության կողմից տրված պայմանագրով, որն ավարտվել է 2004թ.: Դրանից հետո նա մի քանի անգամ դիմել է քաղաքապետարան, որպեսզի շարունակի վարձակալությունը, բայց մերժվել է, ինչպես ինքն է նամակում գրում, առանց բացատրությունների: Նա տարիներ շարունակ մշակել է այդ հողատարածքը, մոտ 100 հատ պտղատու ծառ է տնկել այնտեղ: Նա այդ մշակումը շարունակում է մինչ օրս, դա անում է արդեն 28 տարի: Այդ տարիների ընթացքում ոռոգման և բոլոր այլ ծախսերն իր վրա են եղել:

2010թ. այս հողատարածքը դրվել է աճուրդի և վաճառվել է Գագիկ Պողոսյան անունով անձնավորության: Վերջինս, ըստ «hetq.am» կայքում տպագրված հոդվածի, նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի ազգականն է, ով հիմնել է «Արտաշատ Սիթի» ՍՊ ընկերությունը: Հետագայում այդ ընկերությունը տեղափոխվել է Հովիկ Աբրահամյանի կնոջը, այնուհետև հետ է եկել Գագիկ Պողոսյանին:

Դիմում-բողոքը կայանում է նրանում, որ ինքը 28 տարի այս ծախսերը կատարել է, բայց իրեն չեն տեղեկացրել, որպեսզի կարողանար այդ գնումն իրականացներ: Նա ցանկանում է դիմել դատարան: Այսօր խորհրդակցեցի մի քանի վարչությունների պետերի հետ, ինձ համար էլ հասկանալի է, որ նա դատը չի շահի: Այստեղ կարևորն ինչն է, բացի այն որ նա 28 տարի մշակել է այդ տարածքը, երկրորդը՝ նա ազատամարտիկ է և հերոս, ամբողջ կրծքավանդակը զարդարված է մեդալներով: Ես կարծում եմ, որ այս կարգի մարդկանց նկատմամբ, միգուցե, ցուցաբերենք առանձնահատուկ վերաբերմունք: Ես արվեստի պատմություն եմ դասավանդում, Հին Հռոմում, օրինակ, 25 տարի ծառայած զինվորներին տալիս էին հողակտոր, որպեսզի մնացած կյանքի ընթացքում հանգիստ մշակեն այն:

Հասկանալի է, որ իրավական առումով անթերի է քաղաքապետարանի աշխատանքը, բայց ոգու իմաստով, միգուցե՝ ոչ: Խնդրում եմ հնարավորության դեպքում այս հարցին մի լուծում տալ:

Հայկ Մարության

-Ես պատասխանեմ Ձեր հարցին: Կարող է ավագանին նախաձեռնել որևէ գործընթաց, որը կարող եք անձամբ Դուք գլխավորել, տեսնենք ինչ է հնարավոր անել: Հատկապես, որ Դուք մտածում եք նվիրատվություն պետք է իրականացնի Երևան համայնքը:

Լիլիթ Պիպոյան

-Չէ, գուցե այլ տարածք տրամադրվի վարձակալությամբ:

Հայկ Մարության

-Դուք կարող եք նախաձեռնությամբ հանդես գալ:

Լիլիթ Պիպոյան

-Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Մարկոս Հարությունյան, խնդրե՛մ:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ, քիչ առաջ փոխքաղաքապետ պարոն Սարգսյանն անդրադարձավ Արզումանյան 17 և 10 շենքերի բնակիչների վերաբնակեցման խնդրին: Պետք է նշեմ, որ անձամբ ներկա եմ գտնվել բոլոր հանդիպումներին և քաղաքապետարանի մասով ընդհանրապես խնդիր չեմ տեսնում, դեռ մի բան էլ հակառակը, շատ բարձր կարծիք ունեմ քաղաքապետարանի աշխատանքի վերաբերյալ, քանի որ փաստացի լուծում ենք բնակարանային հարց՝ առանց մի դրամ համայնքի բյուջեից ծախսելու, ինչը շատ գովելի է:

Նախկինում այսպիսի գործելաոճ երբեք չի եղել, սակայն Արզումանյան 10 շենքի բնակիչների մեջ կա վեճ, 3 մուտքերից մեկ մուտքն է, որ պարզ երևում է 4-րդ կարգի վթարային է: Չնայած քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանն ինձ փաստաթուղթ է ցույց տվել, որ 3 մուտքերն էլ 4-րդ կարգի վթարային են, սակայն 1-ին մուտքում բնակարանների ներսում ճաքեր չկան և արտաքինից էլ երևում է, որ չեն կարող 4-րդ կարգի վթարային լինել: Այդ մուտքում ապրող բնակիչները կտրականապես հրաժարվում են լքել իրենց բնակարանները: Նախ կուզենայի հասկանալ այս մասով ի՞նչ գործելաոճ ենք ընտրել, ինչպե՞ս ենք վարվելու այդ մարդկանց հետ, քանի որ ունենք 3 մուտք, մուտք ու կեսում ապրելը, ըստ էության, բնակիչների կյանքի համար վտանգավոր է, իսկ մյուս կեսում՝ վտանգավոր չէ: Ուզում եմ իմանալ մեր դիրքորոշումն այս հարցի վերաբերյալ:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն: Այս հարցի շուրջ խոսելուց, կխնդրեմ իրավաբանական վարչության պետ պարոն Առաքելյանը պարզաբանում ներկայացնի, ի՞նչն ենք պարտավոր անել, նախ հասկանանք իրավական մասով և իրավական մասից զատ ինչ պարտավորություն ունենք:

Զավեն Առաքելյան

-Շնորհակալությու՛ն: Ինչպես գիտենք տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները սահմանված են բացառապես օրենքով և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով կամ «Տեղական ինքնակառավարման մասին» օրնքով չունենք ուղղակի սեփական կամ պարտադիր լիազորություն վթարային շենքերից բնակիչներին վերաբնակեցնելու: Դա կարող է իրականացվել բացառապես կամավոր լիազորությունների շրջանակում՝ համապատասխան միջոցների ներգրավմամբ կամ այն ճանապարհով, որն արդեն ընտրել ենք՝ համայնք-մասնավոր համագործակցության արդյունքում: Հիմնական խնդիրը սա է և բոլորիս էլ հայտնի է, որ սեփականության իրավունքը չենք կարող վարչական հարկադրանքի կամ վարչական ակտի միջոցով ուղղակիորեն դադարեցնել: Դա ևս գործընթաց է, որ պետք է նույնպես օրենքով սահմանված կարգով իրականացվի:

Հայկ Մարության.

-Շնորհակալությու՛ն, այսինքն, եթե պարզ խոսենք, սա այդ մարդկանց սեփականությունն է և իրենք են պատասխանատու իրենց սեփականության և այն ամենի համար ինչ կատարվում է իրենց սեփականության հետ: Օրինակ, եթե այդ շենքում բնակվող բնակիչներից մեկն իր բնակարանն ապահովագրած լիներ ընկերությունում, այդ դեպքում

ընկերությունը կփոխհատուցեր իր բնակարանի արժեքը, և նա կկարողանար գնել բնակարան այլ վայրում: Այստեղ մենք, որպես քաղաքապետարան, իրոք կամավոր լիազորությունների ներքո ենք գործում: Պարզ ասեմ ինչ պետք է լինի. պետք է գա ԱԻՆ-ը, մարդկանց զգուշացնի, որ այս շենքում բնակվելն այլևս վտանգավոր է և հարկադրաբար՝ ոստիկանության հետ համատեղ նրանց տարհանի: Սա այն է ինչ պետք է կատարվի, նույնը պետք է կատարվի վերելակների հետ, որը նույնպես հանդիսանում է այդ շենքի բնակիչների սեփականությունը և, եթե վերելակն արդեն վտանգավոր է մարդկանց կյանքի համար, ԱԻՆ-ը պետք է գնահատի վտանգավորության աստիճանը և ոստիկանության հետ համատեղ արգելի օգտագործումը: Օրենքն այս է ասում:

Այս ամենը տեղի է ունեում Երևան համայնքում, այդ պատճառով ենք անում, քանի որ հոգ ենք տանում մեր համայնքի բնակիչների մասին և փորձում ենք մեր կամավոր լիազորությունների սահմաններում այս հարցին լուծում տալ: Մենք, որպես համայնք, կարող ենք ասել, որ այստեղ անելիք չունենք, դիմենք կառավարությանը, որ այս հարցը լուծեն: Ամեն ինչ անում ենք՝ գտնում ենք կառուցապատողին, բնակիչներին բացատրում ենք և վերջում էլ գնահատական ենք ստանում, որ շատ ենք հետաքրքրված: Իհարկե հետաքրքրված ենք բոլոր այն հարցերում, որտեղ մեր բնակիչներին վտանգ է սպառնում:

Մարկոս Հարությունյան

-Ճի՛շտ եք ասում պարոն քաղաքապետ, բնակիչների հետ հանդիպմանը եղել եմ նաև ես, տեսած կլինեք նաև իմ՝ որպես ընդդիմադիր ավագանու դիրքորոշումը, երբ պարոն Հարությունյանին մեղադրում էին, թե այդ շենքի հետ կապված ինչ հետաքրքրություն ունի: Ես ասել եմ, որ բոլորիս հետաքրքրությունը մեկն է՝ տեսնել Երևանն ավելի նորովի և շենքերը ոչ վթարային: Սակայն, պարոն քաղաքապետ, հարցին այսպես նայենք, քանի որ նախկին իշխանությունը, որը պարտավորված չի եղել, բայց Երևան քաղաքի բյուջեի հաշվին մարդկանց համար բնակարաններ են հատկացրել, նոր շենքեր են կառուցել, ես ավելի քան համոզված եմ, որ այստեղ գտնվողներից ոչ ոք նախկիններից վատը չէ: Դեռ հակառակը՝ մեր գործերով ապացուցելու ենք, որ շատ ավելի լավն ենք: Համոզված եմ՝ անկախ նրանից, որ այս ամենը մեր բարի կամքի դրսևորումն է, այս հարցերը լուծում են գտնելու:

Պարո՛ն քաղաքապետ, թույլ տվեք երկրորդ հարցիս անցնեմ: Երևանում գործող դպրոցների, մանկապարտեզների աշխատակիցներն օգտվում են սոցփաթեթներից, որի մեջ ներառված է առողջապահական ապահովագրություն: Սակայն երաժշտական դպրոցի ուսուցիչները չեն օգտվում: Կցանկանայի իմանալ, ի՞նչն է պատճառը, քանի որ ինձ դիմել են Աջափնյակ վարչական շրջանում գտնվող երեք դպրոցի բոլոր ուսուցիչները և տնօրենները, որոնց հետաքրքրում է այդ խտրական վերաբերմունքը դպրոցների միջև: Մենք բոլորին

նույնությամբ ենք անվանում՝ մանկավարժներ, ովքեր կրթում են երեխաներին: Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն: Այո՛, հարցը ճիշտ է բարձրացված, դեռևս բյուջեի պլանավորման փուլում այս հարցը բազմիցս քննարկել ենք և, ինչպես գիտեք, նախկինից եկած իներցիա կա, որ ի սկզբանե չեն արվել, Ձեր նշած, սպորտ կամ մշակութային դպրոցների, որոնք ևս քաղաքապետարանի ենթակայության տակ են գտնվում: Իրականում այնքան մեծ քանակի չէ և լուրջ ֆինանսական ծանրաբեռնվածություն չի ենթադրում: Այստեղ խնդիրն ավելի շատ ձևակերպումների և ընթացակարգերի մեջ է, որով զբաղվում ենք, հավանաբար այս հարցի մասին անդրադարձ կտանք:

Մարկոս Հարությունյան

-Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Նուարդ Վարդանյան, խնդրե՛մ:

Նուարդ Վարդանյան

-Պարո՛ն քաղաքապետ, ես հանում եմ իմ հարցը:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցության անդամ Արմեն Ներսիսյան, խնդրե՛մ:

Արմեն Ներսիսյան

-Պարո՛ն քաղաքապետ, ցանկանում եմ խոսել մի գործընթացի մասին, որին անձամբ մասնակցել ենք Մարկոս Հարությունյանի հետ: Այցելել ենք Էրեբունի վարչական շրջանի 4-րդ զանգված, որտեղ մեծ քանակությամբ թունաքիմիկատ է թաղված, շուրջ 500-700 տոննա, հստակ դեռ ոչ ոք չգիտի: Կարծեմ, Սովետական Միության ժամանակ են այդտեղ թաղել այդ թունաքիմիկատը, որը շատ թունավոր է, սա հանկարծ չշփոթեք Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանի հետ: Նշեմ, որ շատ անապահով իրավիճակ է տիրում այնտեղ: Անկեղծ ասած, մենք չգիտեինք, որ այնտեղ կա ոստիկանական ծառայություն: Մեքենայով մոտենալով այդ տարածքին, տեսանք, որ այնտեղ փակցված է, որ չի կարելի ներս մտնել: Ասեմ, որ սուր շնչառական լուրջ խնդիրներ ունեցանք այդ մի քանի րոպեների

ընթացքում, մինչև մոտեցավ ոստիկանությունը և տեղեկացրեց, որ այստեղ գտնվելու համար պետք է հատուկ դիմակներ կրել:

Առաջարկում եմ երեք խմբակցությունների կազմերից ստեղծել ժամանակավոր հանձնախումբ, հրավիրենք ԱԻՆ համապատասխան աշխատակիցներին, միասին բարձրանանք այդ սարը, որտեղ թունաքիմիկատներն են թաղված: Ասեմ ինչումն է կայանում տեղի վտանգավոր վիճակը: Այնտեղ, քանի որ սողանքային է, ամբողջ այդ թունաքիմիկատը պարզ, բացեիբաց երևում էր, անձրևի և ձյան հալոցների ջրերն առվակներով գնում և լցվում են Գետառը: Առաջարկում եմ ստեղծել ժամանակավոր հանձնախումբ և մտածել այս հարցի շուրջ: Խնդրում եմ նաև Ձեր պատասխանը:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի բնապահպանության վարչության պետ Խաչիկ Հակոբյանը, խնդրե՛մ:

Խաչիկ Հակոբյան

-Պարոն քաղաքապետ, շնորհակալություն: Նուբարաշենի թունաքիմիկատներն այս պահին լուծում են ստանում, լուծման եղանակը լինելու է այրումը և համապատասխան տարայավորումը: Նույն լուծումը նախատեսվում է այստեղի համար և, եթե այրման լուծումը եղավ տեղում՝ ՀՀ սահմաններից ներս, այս ծավալը նույնպես այդ եղանակով կլուծվի:

Այս պահին ժամանակավորապես ոստիկանությունն ապահովում է, որ տեղաշարժ չլինի, սակայն սողանքով պայմանավորված ռիսկը մնում է որպես ռիսկ:

Հայկ Մարության

-Պարո՛ն Հակոբյան, քաղաքապետարանն է այդ իրականացնում, թե այլ մարմիններ:

Խաչիկ Հակոբյան

-Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից:

Հայկ Մարության

-Մենք այդտեղ ի՞նչ գործառույթ ունենք:

Խաչիկ Հակոբյան

-Պետք է նույնպես վերահսկողություն սահմանենք, որպեսզի ջրի և օդի միջոցով շրջակա միջավայրի աղտոտում տեղի չունենա: Դրանք ժամկետանց դեղերի պահեստներն են, որոնք պահպանության տակ են:

Հայկ Մարության

-Խնդրում եմ մենք նույնպես շատ ուշադիր հետևենք գործընթացին, որովհետև, ի վերջո, սա Երևան քաղաքում է տեղի ունենում: Պետք է տեղյակ լինենք, թե ինչ են անելու, ինչ մեթոդով են անելու, մեր կողմից ևս պետք է վերահսկվի այս գործընթացը:

Արմեն Ներսիսյան

-Այս հարցը ճիշտ է, միգուցե քաղաքապետարանի գործառույթների մեջ չի մտնում, սակայն ճիշտ նշեց բնապահպանության վարչության պետը, որ այդ թունաքիմիկատների արտացոլած գազը և անձրևաջրերը գալիս լցվում են անմիջապես մեր գետերը: Հավատացնում եմ Ձեզ, որ ես, Մարկոս Հարությունը և այն բնակիչը, ով մեզ ուղղորդել էր, որպեսզի այդ իրավիճակը տեսնենք, սուր շնչառական լուրջ խնդիրներ ունեցանք այդ տարածքից դեռ 700մ հեռավորության վրա: Սա շատ լուրջ խնդիր է, անհրաժեշտ է հարցին լուծում տալ: Ես, որպես բնություն սիրող մարդ, պատրաստ եմ համատեղ ուժերով այս հարցին լուծում տալ:

Հայկ Մարության

-Շնորհակալ եմ: Կարող եք միանալ քաղաքապետարանի մեր թիմին այս հարցը վերահսկելու գործընթացում: Պարոն Հակոբյան գիտե՞նք մոտավորապես, երբ է այդ ամենն առաջացել:

Խաչիկ Հակոբյան

-Հիմնականում երկրաշարժից հետո, երբ մենք ստացանք հումանտիր օգնություն, մեծ քանակի դեղերի պաշար ստացվեց, որը չիրացվեց: Դրանք պահպանելու խնդիր առաջացավ, որոնք տեղափոխվեցին մեկ, համեմատաբար անվտանգ պահպանավայր:

Արմեն Ներսիսյան

-Ներողություն եմ խնդրում, դա դեղամիջոց չէ, որը օգնություն է եկել Հայաստան: Թունաքիմիկատի անունը ԴՏՏ է, որը շատ տոքսիկ, ուռուցքածին թույն է: Այն «Նաիրիրտ» գործարանի համար է եկել, թանկարժեք բունկերների մեջ: Դրանք դատարկել են պարկերի մեջ, տեղափոխել այնտեղ, ուղղակիորեն թափել ձորակի մեջ և վրան հող լցրել: Ես այս հարցը մանրամասն ուսումնասիրել եմ:

Խաչիկ Հակոբյան

-Պարոն քաղաքապետ, ԴՏՏ-ի պաշարը գնահատված է, դա Նուբարաշենի գերեզմանոցում է, իրականում փոսորակ չէ, այլ երկաթբետոնե խցիկներ են: ՄԱԿ-ի զարգացման ծրագրի կողմից գնահատված է 1100 տոննա ԴՏՏ-ի պաշար հիմնական խցիկների մեջ և 7000 տոննա աղտոտված հողային շերտ: Ծրագրով նախատեսված է առաջին զանգվածի ոչնչացում, իսկ 7000 տոննա աղտոտված հողի վնասազերծումը, կարծում եմ, առաջիկա երկու տարվա ընթացքում ծրագիրը կհաջողի և այդ պաշարը կոչնչացվի:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Լևոն Զաքարյան, խնդրե՛մ:

Լևոն Զաքարյան

-Հարցս վերաբերում է շրջիկ առևտրի կետերին: Վերջին շրջանում համացանցում լայն տարածում է գտել մի տեսանյութ, որտեղ քաղաքապետարանի առևտրի և սպասարկումների վարչության աշխատակցի և քաղաքացու միջև բուռն վեճ էր: Տեսանյութին գնահատական չեմ տալու, որովհետև հնարավորություն չունենք բոլորս դա նայելու և գնահատական տալու, ուղղակի իմ խնդրանքն ու հորդորն է՝ մեր քաղաքացիների հետ նման վեճերի ժամանակ ավելի կոռեկտ ու ավելի հարգալից լինեն:

Հարցս վերաբերում է նրան, որ քանի օրենքը չի կարգավորում այս դաշտը, քաղաքապետարանն իր գործառույթների շրջանակներում ինչպե՞ս է հարաբերվելու, ի՞նչ կոնսեսիուսի կամ ի՞նչ ճանապարհով է հարցին լուծում տալու:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրե՛մ:

Սերգեյ Հարությունյան

-Շնորհակալ եմ հարցի համար: Պարոն քաղաքապետ, սա այն դեպքն է, որի մասին Ձեզ կիրակի օրը զեկուցել եմ: Տեսանյութի այն մասը, որը հրապարակված է, այն հատվածն է, որտեղ քաղաքացու հետ համարյա թե եկել էինք կոնսեսիուսի: Նույն քաղաքացին սկզբում իրեն շատ տգեղ է պահել, նույնիսկ ընդհուպ մինչև նմանատիպ տեքստով. «հա ինչ կարող ես անել», որն անընդունելի է քաղաքապետարանի աշխատակիցների և ընդհանրապես օրենքի ներկայացուցիչների հանդեպ: Քաղաքացին ցանկություն է հայտնել տեղադրել ինքնաշեն, չմշակած ծառի ֆորմատի մի խրճիթ: Ինքնաշեն սարքել է և ցանկացել այն տեղադրել ՀՀ կառավարության հարակից տարածքում՝ մայրաքաղաքի հրապարակում: Մեզ ասում է՝ լավ չի՞, ասում ենք ոչ, լավ չի, առավել ևս, որ ոչ մի փաստաթուղթ չկա: Լրատվականի գալուց հետո է միայն քաղաքացին այդպես կերպարանափոխել, որ հասկացել է, կհանի այն:

Պարոն Զաքարյան, տեղյակ եմ ողջ խնդրի մասին՝ սկսած տեղադրման պահից, վերջացրած ճանապարհային ոստիկանության, առևտրի և սպասարկումների վարչության արձագանքից: Բազմաթիվ քաղաքացիներ, ովքեր հավաքվել էին այդտեղ, բոլորը հորդորում էին մեր աշխատակիցներին, ասում էին. «Խնդրում ենք դուք մի բարկացեք, դուք գնացեք, մենք կհորդորենք նա կհանի»: Մենք խնդրեցինք, որ այդպես չլինի: Ի վերջո նա հանել է այդ խայտառակությունը, որը փորձում էին այնտեղ տեղադրել: Նշեմ նաև, որ կողքն էլ արդեն իսկ կայանում էր շարժական հոսթելը, այսինքն՝ հրապարակում շուտով կարող է ունենաք շարժական հոսթել:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, գործակարգավարական խորհրդակցության ժամանակ անդրադարձել եմ մեր մոտեցմանը, որը հետևյալն է՝ հորդորում ենք բոլոր տնտեսվարողներին զերծ մնալ այդ գործունեությունից մինչև օրենքը չկարգավորվի: Հակառակ դեպքում բոլոր լծակներով, որոնք օրինական են, պայքարելու ենք դրա դեմ, ինչը և իրականացվել է: Աշխատանքներն իրականացնելիս համագործակցել ենք ՀԷՑ-ի, սննդի վերահսկողության և գյուղատնտեսական տեսչական մարմնի հետ:

Շարժական անունն այդտեղ մի քիչ զավեշտալի է, որովհետև դրանք ընդհանրապես շարժական չեն, լավ էլ տեղում մնացած, արմատավորված, հոսանքը քաշած, կպած, անիվներն իջեցրած են, որ ցանկանան էլ չեն կարողանա տանել: Ես սա որակավորում եմ որպես կրպակ ավտոկայանատեղիի հատվածում, ինչ ուզենք կարող ենք դրան անվանել՝ բացի շարժականից: Շարժականն այն է, որ եկավ, մի փոքր առևտուր արեց գնաց կամ համերգ եղավ, այդ տարածքում մի քանի այդպիսի շարժական կետեր դրվեցին՝ հետաքրքիր ուտեստներով, բնակչությանը սպասարկեցին, գնացին: Սա ընդհանրապես շարժական առևտրի հետ ոչ մի կապ չունի:

Լևոն Զաքարյան

-Դրա համար, պարոն Հարությունյան, ես զերծ մնացի գնահատականներ տալուց: Կարծում եմ, որ այս դեպքում քաղաքապետարանի աշխատակիցները պետք է ավելի զուսպ և կոռեկտ լինեն: Նամակով դիմել էի Ձեզ՝ պարոն Մարության, որ նման մեկ այլ շրջիկ կետ «Երազ» մակնիշի մեքենայով կանգնած է արդարադատության նախարարության նախկին շենքի դիմաց: Ինձ պատասխան էր եկել, որ քանի որ օրենքը չկա, չենք կարող ոչինչ անել: Փաստորեն՝ այս դեպքում ստացվում է, որ կարելի է մեկին հանել, մեկին՝ ոչ: Հարցս կայանում է նրանում, որ քանի օրենքը չկա մենք ի՞նչ ենք իրականացնում, ի՞նչ գործառույթներ ունենք այստեղ: Ինչպես նաև իմ նշած կոնկրետ դեպքի մասով քաղաքացին ծանուցվել էր, դուրս չէր եկել, դրա համար արդեն մոտեցել էիք տեղում փորձել էիք հարցը լուծել:

Սերգեյ Հարությունյան

-Պարո՛ն Զաքարյան, ոչ մի կողմնապահություն չկա, Ձեր նամակի պատասխանն էլ է եղել հետևյալը, որ բոլոր տնտեսվարողներին մոտենում և բազմաթիվ անգամ շատ հանգիստ բացատրում, խնդրում ենք նման բան չանել:

Համամիտ եմ Ձեզ հետ, որ քաղաքապետարանի աշխատակիցները պետք է լինեն ավելի զուսպ և կոռեկտ, բայց պահ է գալիս, որ այդպես է ստացվում:

Պատրաստ ենք բոլորին տեղահանել, բազմաթիվ անգամ առաջարկել ենք, թե ինչու՞ փոքր կենտրոնում, շատ այլ վայրեր կան, որտեղ կարելի է տնտեսվարել: Կան վայրեր, որտեղ

ավելի արդիական կարող է լինել, ոչ թե կենտրոնում՝ ռեստորանի դիմաց կանգնած: Այդ մեքենայի տեղադրման պահին են եղել մեր աշխատակիցները տեղում, դրա համար հաջողվել է տեղում միջոցներ ձեռնարկել: Միանշանակ դաշտը բոլորի համար հավասար է, վերաբերմունքը և իրավունքների պաշտպանությունը նույնպես, բոլորի հանդեպ հավասարության սկզբունքը գործում է և չկա ոչ մի նախապատվելի կամ ավելի խիստ վերաբերմունք:

Լևոն Զաքարյան

-Ամեն դեպքում հրապարակում դեռ այդ հին «Երազ» մեքենան իր առևտուրը շարունակում է:

Սերգեյ Հարությունյան

-Տեղյակ եմ, աշխատում ենք այդ ուղղությամբ:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Արսեն Կարապետյան:

Արսեն Կարապետյանը բացակայում է դահլիճից, հաջորդ հարցի համար ձայն է տրվում ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Մեսրոպ Պապիկյանին, խնդրե՛մ:

Մեսրոպ Պապիկյան

-Պարո՛ն քաղաքապետ, հարցս Նոր Նորքի 9-րդ զանգվածի գյուղմթերքի փոքր շուկայի մասին է, որը տարիներ առաջ մասնավորեցվել է և սեփականատերն այժմ աստիճանաբար դուրս է մղում առևտրականներին: Այդ շուկայից կրպակներ է կառուցում, կա՞ որևէ մշակված քաղաքականություն այդ տարածքի հետ կապված: Ի՞նչ ենք անելու, որքան գիտեմ մեր քաղաքականությունն ուղղված է նրան, որ տարբեր վայրերում գյուղմթերքի շուկաներ լինեն: Ի՞նչ ենք անելու Նոր Նորքի 9-րդ զանգվածում ստեղծված իրավիճակի հետ: Այս հարցի վերաբերյալ գրավոր հարցում եմ ուղղել Ձեզ, սակայն գրավոր պատասխանում իմ կողմից գրավոր բարձրացված հարցին պատասխան չի տրվել:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Հայկ Միրյանը, խնդրե՛մ:

Հայկ Միրյան

-Հարգելի՛ պարոն քաղաքապետ, հարգելի՛ ներկաներ, իրոք այդ շուկայում պարբերաբար խնդիրներ են լինում սեփականատիրոջ և վարձակալող աշխատակիցների հետ: Վարձակալությամբ տեղեր վերցրած աշխատակիցների հետ դժվար է շփումը, սակայն սեփականատիրոջը հորդորել ենք և վարձավճարներն իջեցրել ենք օրական մինչև 1000 դրամ

գումարած 300 դրամ պահեստային, առաջ 1700 դրամ էր: Այնտեղ պարբերաբար խնդիրներ լինում են, սակայն սեփականատերը դիմացի մայթում սեփական հող ունի, 10 օր առաջ ինձ մոտ էր և խնդրում էր, որպեսզի ըստ կարգի բացօթյա շուկա կառուցելու թույտվություն ստանա: Հիմա քննարկումների փուլում ենք, եթե կարողանանք դրան հասնել և սեփականատերը կարողանա իր սեփական հողակտորում բացօթյա շուկա կառուցի, մենք, կարծում եմ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ զանգվածների մասով բացօթյա շուկայի հարց կարող ենք լուծել:

Ամենօրյա ռեժիմով հետևում ենք, որ կոնֆլիկտ չլինի, հիմնական կոնֆլիկտը 7-8 կին է ստեղծում, ընդհանրապես չեն ենթարկվում, խախտում են փողոցային առևտրի հետ կապված կանոնները, իրենց ապրանքները չնախատեսված տեղում են դնում: Խնդիր կա իրականում, շուկան կիսաշուկայի նման է, մի հատվածը բաց է, մնացած հատվածը փակ է, որի վարձավճարը ավելի թանկ է: Մի խոսքով դա է վիճակը:

Մեսրոպ Պապիկյան

-Իրականում կոնֆլիտն առաջացել է նրանից, որ մարդիկ տարիներ շարունակ այդտեղ առևտուր են իրականացրել, այնուհետև սեփականատերը նրանց տաղավարները վերածել է բուտիկների:

Երկրորդ հարցս վերաբերում է ավագանիների հարցումներին, նաև այս դեպքում, երբ հարցում էինք անում՝ իմանալու համար այս ոլորտի հետ կապված ի՞նչ քաղաքականություն, մարտավարություն կամ պլանավորում է մշակվում: Շատ ժամանակ պատասխաններ ենք ստանում, որտեղ օրենքի կետեր են նշված և պատասխանը լիարժեք չի լինում: Եթե օրենքից ցանկանայինք հարցնել, այդ հարցը կտայինք: Սրա հետ կապված ի՞նչ կարծիքի եք, ինչ կարելի է անել, որպեսզի հարցն ու պատասխանն ավելի կառուցողական լինեն: Եղել են դեպքեր, երբ ավագանու երկու անդամ իրարից անկախ նույն հարցի վերաբերյալ գրություն են ներկայացրել և ստացել են տարբեր պատասխաններ:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, պարոն Պապիկյան, առաջ ասում էինք, որ նույն հարցի վերաբերյալ նույն պատասխանն է գալիս, վատ է, հիմա տարբեր պատասխաններ են գալիս, էլի վատ է: Այնուամենայնիվ՝ Ձեր հարցին պատասխանելով ասեմ, ինչու է օրենքից մեջբերումներ արվում, օրինակ այս դեպքում, սեփականատերն ինքն է որոշում ինչպես կազմակերպի իր բիզնեսը: Այո՛, պետք է մեզ դիմի, ասի իր ծրագրի մասին, մենք ասենք այո կամ՝ ոչ: Դուք, եթե ասում եք ինչ քաղաքականություն եք տեսնում այդ տարածքում, ի՞նչ տեսնենք այդ տարածքում, սեփականատերն է կառուցում իր բիզնես ծրագիրը, մենք չենք կարող նրա փոխարեն Ձեզ պատասխան տալ:

Այսինքն՝ ցանկությունների կամ պատկերացումների մասին պատասխանը հստակ չի կարող լինել և, ի վերջո, ենթադրենք հնարավոր է վաղը դա օգտագործվի նույն քաղաքացիների կողմից դատարանում: Քանի որ հիմա ամեն ինչ շատ բաց է և թափանցիկ, յուրաքանչյուր վարչության կողմից տրված պատասխան կարող է հայտնվի դատարանում և իմ հանձնարարականն է, որ այն կազմված լինի այնպես, որ ամեն կողմից պաշտպանի Երևանի քաղաքապետարանը: Եվ շատ հաճախ նամակի չոր ու ցամաք լինելը հենց այդտեղից է գալիս, քանի որ յուրաքանչյուր էմոցիոնալ նախադասություն յուրաքանչյուր դատական նիստում մեր դեմ շատ վատ անդրադարձ կարող է ունենալ:

Մեսրոպ Պապիկյան

-Օրինակ բերեմ այս դեպքը, կարող էր պատասխան լինել, որ, այո, այս պահի դրությամբ քննարկում է գնում, լուծում ենք փնտրում և այդ պատասխանը բավարար կլիներ, իսկ երբ օրենք են մեջբերում, ես գիտեմ, որ այնտեղ սեփականատեր կա և խնդիր կա:

Հայկ Մարության

-Այստեղ քննարկում չկա, պարոն Պապիկյան, մենք, որպես համայնք, ներգրավվում ենք այս կռվի մեջ: Կարող ենք ասել ահա սեփականատերը, ահա ոստիկանությունը, ահա դատարանը, ինչ ուզում եք արեք: Մենք, ուղղակի որպես համայնք, ամեն տեղ մասնակցում ենք, ներգարվվում ենք: Ձեր ներկայացրած դեպքում ընդհանրապես անելիք չունենք: Այդ կանայք, եթե դեմ են, պետք է դիմեն դատարան և վերջ:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գայանե Մելքոմ Մելքոմյան, խնդրե՛մ:

Գայանե Մելքոմ Մելքոմյան

-Պարո՛ն քաղաքապետ, ես հանում եմ իմ հարցը:

Հայկ Մարության

-Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Հայկ Հովհաննիսյան, խնդրե՛մ:

Հայկ Հովհաննիսյան

-Ինձ հետաքրքրում է արդյոք Երևան քաղաքում տիրապետում ենք, թե հիվանդանոցների, կլինիկաների, ատամնաբուժարանների առաջացրած սանիտարական աղբը, որը, ըստ իս մենք գնում ենք այն ուղղությամբ, որ վաղ թե ուշ մենք պետք է ունենանք աղբի վերամշակման գործարանը և կարողանանք տարբերակել աղբը: Հետագայում մեզ շատ կօգնի, որպեսզի այն մարդիկ, ովքեր կաշխատեն տվյալ գործարանում, նրանց զերծ պահենք այդ քիմիական միացություններից կամ ընդհանուր առմամբ իրենց մեջ արյուն և այլ

բժշկական նյութեր պարունակող պարագաներից: Ինչպե՞ս է վերահսկվում այդ պրոցեսը, եթե կա:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Սերգեյ Հարությունյանը, խնդրե՛մ:

Սերգեյ Հարությունյան

-Հարցն իրոք արդիական է, սակայն, որ ասեմ լիովին տիրապետում եմ կոշտ թափոնների աղբի վերամշակման հարցին՝ ոչ, բայց ինչպես քիչ առաջ շեշտեցիք, պարոն Մարության, ամեն ինչի մեջ ներգրավված ենք: Եղել է նման դեպք, քննարկել ենք պարոն Բաբինյանի հետ և համապատասխան նամակներ ենք գրել բուժհաստատություններ, որոնք պարտավոր են կոշտ թափոնների տարհանման պայմանագրեր ունենալ: Հատուկ պայմաններում պետք է դրանք թափվեն և վերամշակվեն: Պարոն Բաբինյանը կպարզաբանի:

Հայկ Մարության

-Պարո՛ն Բաբինյան, ներկայացրեք:

Կամսար Բաբինյան

-Պարո՛ն քաղաքապետ, ասեմ, որ մենք նոր ենք գրություն ուղարկել Երևան քաղաքում գտնվող բոլոր բուժհիմնարկներին՝ կապված կոշտ թափոնների հետ: Իրենք պարտավոր են ունենալ կնքված պայմանագիր: Երևանում կա մեկ կամ երկու կազմակերպություն, եթե չեմ սխալվում, որոնք իրականացնում են այդ կոշտ թափոնների՝ այրման միջոցով ոչնչացման աշխատանքները: Մենք երկօրյա ժամկետում բոլոր տվյալները բոլոր բուժհիմնարկներից կիմանանք: Վերահսկողության հետ կապված ասեմ, որ դա ՀՀ առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակում է գտնվում, պետական առողջապահական տեսչության լիազորությունների սահմաններում է:

Հայկ Մարության

-Քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող բուժհիմնարկների մասին է նաև խոսքը, իրենք են հսկողություն իրականացնում:

Կամսար Բաբինյան

-Այո՛, ինչպես քաղաքապետարանի ենթակայության, այնպես էլ Երևան քաղաքի ողջ տարածքում գտնվող բուժհիմնարկների նկատմամբ:

Հայկ Հովհաննիսյան

-Շնորհակալությու՛ն պատասխանի համար: Երկրորդ հարցս ձևակերպեմ: Լուրեր են շրջանառվում, որ իրավապահ մարմինները հաճախ էին սկսել այցելել Դավթաշեն վարչական

շրջան: Այնուհետև հանրային հեռուստատեսությամբ խոսեցին, որ ինչ-որ քրեածին նյութեր են գտել, կուզեի իմանալ ի՞նչ ընթացքում է այդ գործը:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Միքայել Թումասյանը:

Միքայել Թումասյան

-Այո՛, տվյալները ճիշտ են, եղել են այցեր ոստիկանության 6-րդ վարչության կողմից, նյութեր կան ուղարկված դատախազություն: Անկեղծ ասած, տեղյակ չեմ գործն ինչ ընթացքի մեջ է, կարծում եմ կտեղեկանանք իրավապահ մարմիններից:

Հայկ Մարության

-Ես տեղեկացված եմ, գործն ընթացքի մեջ է, ասեմ ավելին՝ վերջերս ուղարկված մեծ փաթեթը պետք է փոխանցեմ իրավաբանական վարչություն: Բոլոր այն գործերը, որոնք տալիս եք, բնականաբար, փոխանցվում է իրավապահ մարմիններին, դատախազություն և քրեական գործեր են հարուցվում: Ցավոք՝ շատ հաճախ, եթե անգամ գիտես, որ այդտեղ խախտում է եղել, որ մարդիկ՝ ի վնաս համայնքի, օրենքները հատուկ օգտագործել են հարստանալու համար, սակայն շատ հաճախ գործել են օրենքի սահմաններում և այս խախտումներն արել են օրենքի սահմաններում, ինչքան էլ զավեշտալի է հնչում, բայց դա այդպես է: Երբ խոսքը գնում է գույքի վաճառքի մասին, այո՛, մեզ մոտ այս պահին այդ գործընթացը դանդաղել է, որովհետև գնահատում ենք այդ գույքի իրական արժեքը, նոր արդեն շուկայական գներով հանում աճուրդի: Հենց այստեղ էր, որ կարողանում էին կադաստրային գնով դնել վաճառքի, շատ մինիմալ գներով գնում էին, այնուհետև՝ մի քանի ամիս կամ մեկ տարի անց դա վերավաճառում էին արդեն շուկայական գնով՝ ունենալով շատ մեծ շահույթ: Այժմ մի փոքր դանդաղել է մեր գույքի օտարման գործընթացը, քանի որ ամբողջ գույքը վերագնահատում ենք, որպեսզի նոմալ գներով վաճառենք:

Հայկ Հովհաննիսյան

-Շատ շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ և բոլոր այն անձանց, ովքեր հետամուտ են լինում մեր նորաստեղծ իրավական Երևանի համար:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Էռնեստ Ավանեսով, խնդրե՛մ:

Էռնեստ Ավանեսով

-Հարգելի՛ գործընկերներ, ցանկանում եմ նույնպես շնորհակալական խոսք ասել վարչական շրջանների ղեկավարներին բոլոր ահազանգերին՝ կապված աղբահանության, ապօրինի շինարարության կամ կանգնակներ դնելու հետ, օպերատիվ արձագանքելու

համար, արագ լուծում են տալիս այդ հարցերին, նույնիսկ նկարներ են ուղարկում, ինչը ոգևորիչ է:

Հարցերս, ճիշտն ասած, շատ են: Դրանցից մեկի հետ կապված մեր գործընկեր, ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ խմբակցությունից Մարկոս Հարությունյանը բարձրացրեց, որը վերաբերում էր սպորտդպրոցների մանկավարժների սոցփաթեթներին: Կցանկանայի մի փոքր պարզաբանում՝ ասացի, որ երեկ մի քանի անգամ հանդիպել ենք տնօրենների հետ, այդ հարցը նույնպես օրակարգում էր: Մարդիկ ասում էին, որ սոցփաթեթում, բացի բժշկական ապահովագրությունից նաև հանգստի ապահովագրությունն էլ ներառված լինի, ինչպես դպրոցներում մանկավարժներինն է: Ի՞նչ միջոցներ են այդ առումով ձեռնարկվում:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն, դպրոցների պարագան մի փոքր այլ է, քանի որ դպրոցների սոցիալական փաթեթները կառավարության կողմից սահմանված բաղադրիչներով են տրամադրվում: Քաղաքապետարանի ենթակայության կառույցներում, հիմնարկներում դրանք տրամադրվում են այլ ռեժիմով: Դպրոցներում, այո՛, հնարավորություն կա այդ փաթեթներն օգտագործել առողջապահության, հանգստի, կրթության և այլ վարձավճարների համար: Մեր պարագայում մեր ենթակայության բոլոր հիմնարկներում, մասնավորապես մանկապարտեզներում, փաթեթը սահմանափակված է առողջապահության ապահովագրությամբ:

Էռնեստ Ավանեսով

-Շնորհակալությու՛ն պարզաբանման համար և երկրորդ հարցս հնչեցնեմ որպես շարունակություն իմ գործընկեր Սաթենիկ Մկրտչյանի կողմից բարձրացված հարցի՝ կապված հանրակրթական դպրոցներում ջերմաստիճանի հետ, քանի որ շատ ձմեռներ են սպասվում: Երեկ նորից մարզադպրոցների տնօրենների կողմից այդ հարցը հնչեց:

Գիտենք, որ շատ դպրոցներում գործում են ՀՈԱԿ-ներ և այդ ՀՈԱԿ-ներում, այսինքն՝ մարզադպրոցներում մարզումները հիմնականում ժամը 15.00-ից հետո են, որպեսզի չխանգարեն հանրակրթական դպրոցի դասերը: Մարդիկ ասում են, երբ իրենց մարզումների ժամն է գալիս, ջերմաստիճանը նվազում է, այսինքն՝ դպրոցի տնօրեններն անհայտ պատճառներով անջատում են ջեռուցումը: Խնդրում եմ ասել այս մասով ի՞նչ միջոցներ են ձեռնարկվում:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Վիրաբյանը:

Տիգրան Վիրաբյան

-Ընդհանրապես հանրակրթական դպրոցների դահլիճներում մեր սպորտդպրոցների գործունեությունը լուրջ իրավական կազուսի առաջ է կանգնեցրել բոլորիս, քան որ սա զուտ ներքին պայմանավորվածության և բարի կամքի դրսևորում է, որ մենք կարողանում ենք մեր պարապմունքներն անցկացնել հանրակրթական դպրոցներում: Այստեղ հարցի երկրորդ, ավելի ցավալի կողմ կա. պետգույքի կոմիտեն, երբ հայտարարում է վարձակալության աճուրդներ և հայտնվում են իրավական վարձակալներ, որոնք իրավական հիմք ունեն հանրակրթական դպրոցներում գործունեություն ծավալելու, մենք ավելի սեղմվում ենք, քանի որ մեր սպորտդպրոցները, բնականաբար, գործունեություն ծավալելու համար չեն վճարում հանրակրթական դպրոցներին: Երբ դպրոցը հավելյալ ֆինանսական միջոցների համար իր վարձակալական տարածքի մի մասը հանում է վարձակալության, բնականաբար, առաջնորդվում է առաջնային իր շահերով: Այստեղ լուրջ խնդիր է առաջանում, որովհետև մի կողմից, գիտենք որ, սպորտդպրոցների պայմանները բավարար չեն պարապմունքներ անցկացնելու համար, մյուս կողմից այլ տարածքներ չգտնելով՝ ստիպված ենք հարմարվել հանրակրթական դպրոցներում:

Այս պարագայում հանրակրթական դպրոցը չունի հավելյալ միջոցներ, որպեսզի պլանավորի նաև գումար արտաժամյա պարապմունքների ժամանակ իր շենքը տաքացնելու համար, առավելապես, երբ արվում է որպես բարի կամքի դրսևորում: Այս մասով մի շարք քննարկումներ ենք կազմակերպել, բայց, պիտի անկեղծ ասեմ, որ այդ խնդրի լուծման ճանապարհին հայտնվել ենք փակուղում, քանի որ խնդրի լուծման համար իրավական ոչ մի ճանապարհ չենք գտնում: Կա ճանապարհ՝ վերանորոգել, վերակառուցել սպորտդպրոցներ, որը բավականին երկարատև ուղի է, որին ժամանակի ընթացքում պետք է հասնենք: Առաջնային լուծումները դրանք փոխըմբռնման, ջերմ և մարդասիրական վերաբերմունքի մթնոլորտն է, որի արդյունքում լինում են շատ դեպքեր, երբ չի հաջողվում ստանալ ցանկալի արդյունք:

Էռնեստ Ավանեսով

-Շնորհակալությու՛ն, պարոն Վիրաբյան, հատկապես Ձեր վերջին խոսքը շատ կարևոր էր: Իմ առաջարկությունը և կոչն է՝ հնարավորության դեպքում համագործակցության եզրեր գտնել հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների միջև:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Գրիգոր Երիցյան, խնդրե՛մ:

Գրիգոր Երիցյան

-Հարգելի՛ գործընկերներ, մինչև հարցին անդրադառնալն ասեմ, որ ես երկակի ստանդարտներին առհասարակ դեմ եմ: Այսօր եթե կհիշեք նիստն սկսվեց նրանով, որ ընդդիմությունը մեզ մեղադրում էր, որ չենք մասնակցում, որոշ հարցերից անտեղյակ են: Եկեք արձանագրենք, որ այս պահին դահլիճում ընդդիմության ոչ մի ներկայացուցիչ չկա, դա նույնպես մասնակցության մասին որոշակի տեղեկություն է տալիս:

Երկրորդը՝ մի այսպիսի պատկերացում կար, որ մեծ խնդիր է, երբ վարչական շրջանի ղեկավարի տեղակալը հանցագործություն ուներ, որը պատիժը կրել է և հիմա փորձում է ինտեգրվել հասարակություն, մինչդեռ նույն խմբակցության Ազգային ժողովի պատգամավորը դատապարտվել է 3 տարի 6 ամիս ազատազրկման, բայց սա չգիտես ինչու խնդիր չի հենց նույն կուսակցության համար:

Առաջին հարցս վերաբերում է թափուր հաստիքների մրցույթներին, որոնք անցկացվում են քաղաքապետարանում: Եղել են քաղաքացիներ, որ ահազանգել են, թե մրցույթի տարբեր փուլերը հաղթահարելուց հետո տվյալ պաշտոնում ամեն դեպքում նշանակվել են ժամանակավոր պաշտոնակատարները, ինչը զուցե և տրամաբանական է, քանի որ իրենք ունեն աշխատանքային փորձ: Հարցս այսպիսին է՝ ամփոփելով մինչև այս պահը կատարված մրցույթները, քանի՞ նոր աշխատակից է ընդունվել, և քանի՞ ժամանակավոր պաշտոնակատարներ են վերանշանակվել, որպեսզի այս հարաբերակցությունը մենք էլ տեսնենք:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Վահե Խաչատրյանը:

Վահե Խաչատրյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար: Նշեմ, որ նոր աշխատողներ էլ կան, հին աշխատողներ էլ կան, օբյեկտիվ ձևով լավագույնն է ընտրվել: Ինչ վերաբերում է կոնկրետ վիճակագրությանը: Նիստից հետո կարող եք մոտենալ մանրամասն կներկայացնեմ Ձեզ:

Գրիգորի Երիցյան

-Ես կարող եմ հետագայում հարցում անել իմանալ, բայց կցանկանայի այս մասին հանրությունն իմանար, որովհետև քաղաքացիներն են այս հարցը տալիս: Ինչևէ, երկրորդ հարցս ձևակերպեմ: Շատ հարցեր են ինձ տալիս երեք տարածքների վերաբերյալ: Օղակաձև զբոսայգու, թե որն է քաղաքապետարանի տեսլականն այդ տարածքի, որը վաղուց դադարել է

այգի լինել: Ինպես նաև Բուզանդի, Դեմիրճյան, Արամի փողոցների, մանկական երկաթուղու թունելների կողքի այգու տարածքի ճակատագիրը, որը լցված է կենցաղային աղբով, որը նույնպես այգի չի հիշեցնում: Վերջինը քաղաքապետարանի հարակից տարածքում կառուցված չգիտեմ այգի ասեմ, թե ինչ, որովհետև մի քիչ այգու նման չի, դրա ճակատագիրն ի՞նչ է լինելու: Ընդհանրապես, վերահսկողություն իրականացվե՞լ է ծառերի տնկման, կտրման ընթացքում, որովհետև նախկին և ներկա նկարները, որ համեմատում ես, ուղղակի անհամեմատելի են: Պատմություն ունեցող ծառեր են հատվել, ինչը, կարծում եմ, շատ ցավալի է:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի բնապահպանության վարչության պետ Խաչիկ Հակոբյանը, խնդրե՛մ:

Խաչիկ Հակոբյան

-Եթե կարելի է հարցի վերջից պատասխանեմ: Ինչպես հասկացանք, խոսքը 2800-ամյակի առթիվ կառուցվող այգուն էր վերաբերում: Նշեմ, որ այգին կառուցման նախնական փուլում ունեցել է նախագիծ, որն ունեցել է նաև դենդրո-նախագիծ: Այն անցել է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փուլ և այդ փաստաթղթով նախատեսված է եղել ծառերի վերափոխումներ: Այդ գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հողային աշխատանքների մեկնարկից առաջ: Սահմանված օրենսդրական բոլոր ընթացակարգերով, նախանցած շաբաթ այնտեղ առկա ծառերի էտման աշխատանքներ են իրականացվել: Դա առիթ հանդիսացավ, որպեսզի մանրամասն ուսումնասիրեմ բոլոր փաստաթղթերը, որոնք, մոտավորապես, երկու տարվա վաղեմություն ունեն: Կարող եմ հավաստել, որ ունենք աննախադեպ որակական և տեսակային կազմով ծառեր, որոնք ներկրված են Եվրոպայից, ունեն առանձին ծագումնաբանական հավաստող փաստաթղթեր, որ այդ ծառատեսակները նաև Երևանի պայմաններում կաճեն և կգոյատևեն:

Ինչ վերաբերում է մանկական երկաթուղու այդ հատվածին, այս պահին ես զերծ կմնամ որևէ բան ասել, քանի որ զբոսայգիներին հարող տարածքների հետ կապված աշխատանքներին զուգահեռ, Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի հետ, աշխատանքներ ենք տանում այս մասով և համապատասխան առաջարկներ ներկայացնում քաղաքապետին:

Օղակաձև զբոսայգու մասով լուսաբանվեց նաև մամուլում: Քաղաքապետարանի և Կենտրոն վարչական շրջանի կողմից տարվում են աշխատանքներ: Այն տեղերում, որտեղ չունենք սեփականության, վարձակալության կամ այլ իրավունքներ, բոպե առաջ մաքրվում են այդ հատվածներն առկա շինություններից և անմիջապես բարեկարգման աշխատանքներ են իրականացվում՝ զուգորդվելով կանաչապատման աշխատանքների հետ: Միևնույն

ժամանակ Կենտրոն վարչական շրջանում աշխատանքներ են տարվում, որպեսզի 6-րդ գոտում նոր մաստեր պլան իրականացվի և նոր այգու կոնցեպտի լուծում առաջարկվի: Այս պահի համար այսքանը:

Գրիգորի Երիցյան

-Շնորհակալությու՛ն, ուղղակի հետագայի համար շատ մեծ խնդրանք ինձնից և մի շարք քաղաքացիներից, որ ցանկացած բարեկարգման պարագայում գոնե փորձենք չվնասել այն, ինչ-որ արդեն կա: Այսօր այն բոլոր ուռենիները, որոնք շարքով կանգնած էին երկու կողմից, արդեն պատմություն են, դրանցից և ոչ մեկը, ցավոք սրտի, չի մնացել: Փորձենք եղածը պահպանել:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամներ Վահե Գևորգյանը և Արուսյակ Հարությունյանը հանել են իրենց հարցերը:

Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Տիգրան Գալստյան, խնդրե՛մ:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ, ես երկու հարց ունեմ: Առաջին հարցս Ձեզ է ուղղված: Դուք հանդիսանում եք «Երևան» հիմնադրամի հոգաբարձուների 11-հոգանոց խորհրդի նախագահը: Այս պահին հիմնադրամն իր դրամական հաշվին ունի 486 մլն. դրամ, որն ավանդ է դրված Հայբիզնեսբանկում: Հիմնադրամը ոչ մի գործունեություն չի իրականացնում այս պահին:

Ինձ առաջին հերթին հետաքրքրում է հիմնադրամի ճակատագիրը, որովհետև ես այդ հիմնադրամում ներկայացնում եմ ԻՄ ՔԱՅԼԸ դաշինքը: Հիմնադրամն աշխատելու է արդյոք, թե ոչ, եթե աշխատի, ապա ի՞նչ ձևաչափով է աշխատալեու: Ամենակարևորն ինձ հետաքրքրում է հեղափոխությունից հետո նախկին քաղաքային իշխանությունները մոտ 1.8 մլրդ դրամ գումար են վերադարձրել, որը հիմնադրամինն էր, ե՞րբ է այդ գումարը հետ վերադարձվելու հիմնադրամին:

Ես նաև մի առաջարկ ունեմ. տարբեր վարչական շրջանների ղեկավարների հետ հանդիպումների և խոսակցությունների ժամանակ պարզել եմ, որ երբ հրատապ հարց է լինում, ֆինանսական միջոցներ չեն ունենում, չեն կարողանում այդ հարցերին արագ արձագանքել և լուծում տալ: Առաջարկում եմ, երբ հիմնադրամն սկսի գործել, այնտեղից ինչ-որ անհայտ գումար հատկացվի վարչական շրջանների ղեկավարներին, որպես արտաբյուջետային ֆոնդեր և իրենք հաշվետվության ձևով հիմնադրամին կներկայացնեն կատարած աշխատանքների մասին: Չեմ կարծում դա ինչ-որ լուրջ խնդիր կառաջացնի: Ամեն դեպքում ավանդ դնել բանկում և ոչինչ չանել, չեմ կարծում, որ դա ճիշտ գործելաոճ է:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, հարցին կպատասխանի քաղաքապետի տեղակալ Հայկ Սարգսյանը:

Հայկ Սարգսյան

-Շնորհակալությու՛ն, ասեմ որ ոչինչ չանելը հետևանք չի ավանդ դնելու, ավանդ դնելը միջոցների պարապուրդն ավելի արդյունավետ օգտագործելու նպատակ է հետապնդում: 486 մլն. դրամն ավանդ է դրված 6.5%-ով, որը բավական մեծ եկամտաբերություն կապահովի, շուրջ 200 մլն.:

Ինչպես հասկացա հիմնական հարցը վերաբերում էր հիմնադրամի կեցության և գոյության նպատակին: Հիմնադրամն իր կանոնադրական նպատակներով կոչված է աջակցելու քաղաքի ծրագրերին: Այն ծրագրերին, որոնք քաղաքի համար առաջնային և օրհասական խնդիրներ են: Ինչպես գիտեք քաղաքապետարանը քաղաքի խնդիրներն ու հոգսերը հոգում է բացառապես գնումների ընթացակարգերով:

Հիմնադրամը չի կարող արտաբյուջետային ֆոնդեր տրամադրել վարչական շրջաններին, որովհետև վարչական շրջանները չունեն առանձնացված բյուջեներ, որպես առանձին սուբյեկտներ: Քաղաքի միասնական, համախմբված բյուջեի շրջանակներում է իրականացվում վարչական շրջաններին քաղաքապետի պատվիրակված լիազորությունները:

Ըստ էության՝ հիմնադրամի միջոցները ոչ թե պարապուրդ են, վերջերս հիմնադրամի միջոցներով իրականացրեցինք մի մշակութային միջոցառում: Սա այն իրավիճակն է, երբ հիմնադրամի միջոցների օգտագործումը բացառապես հրատապության և ծայրահեղ անհրաժեշտության իրավիճակում է, որպեսզի փրկի իրավիճակներ քաղաքում, օրհասական, անհրաժեշտ խնդիրների լուծման համար:

Քաղաքապետի հստակ կարգադրություն կա, որպեսզի հիմնադրամի միջոցներն օգտագործվեն բացառապես իր կանոնադրական նպատակներով:

Տիգրան Գալստյան

-Ես ամենակարևոր հարցի պատասխանը չստացա, նախկին քաղաքային իշխանությունների կողմից 1.8 մլրդ. դրամ գումարը, որ վերադարձվել է, հիմա որտե՞ղ է գտնվում:

Հայկ Մարության

-Պարո՛ն Գալստյան, այն գտնվում է պետական բյուջեում: Ես նախկինում նիստերից մեկում այս հարցին անդրադարձել եմ, որ այդ գումարը գտնվում է պետբյուջեում, ոչ թե համայնքի բյուջեում:

Տիգրան Գալստյան

-Հնարավոր չէ՞ այդ գումարը հետ պահանջել, չէ որ դա հիմնադրամի գումարն է:

Հայկ Մարության

-Կարծում եմ ոչ, բայց մենք կարող ենք դիմել կառավարություն. Պարզել, արդյոք, հնարավոր է այդ գումարը հետ վերադարձնել:

Տիգրան Գալստյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ ես հանում եմ երկրորդ հարցս, քանի որ պարոն Մեսչյանը դահլիճում չէ:

Հայկ Մարության

- Հաջորդ հարցը՝ ԻՄ ՔԱՅԼԸ խմբակցության անդամ Սուրեն Էյրամջյան, խնդրե՛մ:

Սուրեն Էյրամջյան

-Շնորհակալությու՛ն, պարոն քաղաքապետ, հարցս բավականին պարզ է և քաղաքացիներից շատերին հուզող և անհանգստացնող: Խոսքը վերաբերում է ճանապարհների փոսալցման աշխատանքներին: Հասկանում եմ, ունենք օբյեկտիվ պատճառ, այս տարի ձմեռը երկար էր և եղանակային առումով ոչ այնքան բարենպաստ, բայց մեկ այլ պատճառ էլ կա, իրականում տեղյակ եմ այդ պատճառի մասին, ցանկալի կլինի մեր հանրությունն էլ տեղեկանա դրա մասին և հասկանա, թե ինչ պատճառներով են այդ աշխատանքները դանդաղում:

Վստահ եմ, որ վարչական շրջանների ղեկավարներին էլ են այդ հարցերը տալիս, կցանկանայի մեկընդմիշտ այս հարցը փակենք և քաղաքացիների համար որոշակի առումով ժամանակացույցը հնչեցնենք: Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Պարո՛ն Էյրամջյան, ես քաջատեղյակ եմ հարցի մասին, ինձ էլ է շատ մտահոգել այս հարցը, բայց կան օբյեկտիվ պատճառներ և քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության պետ Գրիգոր Հարությունյանը կանդրադառնա այս հարցին, որպեսզի հանրությունն էլ տեղեկանա:

Գրիգոր Հարությունյան

-Շնորհակալությու՛ն հարգարժան քաղաքապետ, հարգելի գործընկերներ: Քանի որ անցած տարվա բոլոր մրցույթներն ավարտվել էին արդեն՝ ասֆալտապատման աշխատանքները, մենք հոկտեմբեր ամսից առայսօր Երևան քաղաքում շարունակում ենք կատարել փոսալցում: Մրցույթը կայացել է ամսի 10-ին, Բաշկիրիայից «Նուռ» կազմակերպությունը պարզաբանումներ էր խնդրել, մրցույթը մեկնարկվեց, սակայն հաղթող չճանաչվեց, քանի որ այդ մրցույթը բողոքարկողը հետ է վերցրել բողոքը: Երեկ 2:30 պետք է

կայանար նոր նիստ, որը չկայացավ, որովհետև բողոքարկողը Հայաստանում չէ և նրա իրավահաջորդին չէինք տեղեկացրել, քանի որ չէինք իմացել, որ նա պետք է տեղեկացված լիներ, մեզ չէին զգուշացրել այդ մասին, որովհետև նման նախադեպ չենք ունեցել:

Հայկ Մարության

-Նիստը ե՞րբ պետք է տեղի ունենա:

Գրիգոր Հարությունյան

-Դեռ չեն հաղորդել, պարոն քաղաքապետ, ասացին, որ անպայման մեզ կտեղեկացնեն երբ է կայանալու երկրորդ փուլը:

Հայկ Մարության

-Պարո՛ն Սարգսյան, խնդրում եմ երկու բառով տեղեկացնել ֆինանսների նախարարության հետ մեր նամակագրության մասին:

Հայկ Սարգսյան

-Իրականում կարևոր էի համարում հայտնել, որպեսզի հանրությունն իրազեկված լինի հարցի վերաբերյալ: Այստեղ օրերի խնդիր է, քանի որ մրցույթի ամենատևական փուլն ավարտված է, ինչպես նշվեց, բողոքարկողը հետ է վերցրել իր բողոքը, քանի որ պարզաբանվել են առաջացած բոլոր հարցերը: Շաբաթվա կամ օրերի խնդիր է, նիստից անմիջապես հետո կանցնենք պայմանագրի կնքման փուլ և ամբողջ ախատանքները ողջ ծավալով կմեկնարկեն:

Սուրեն Էյրամջյան

-Շնորհակալությու՛ն: Երկրորդ հարցս. բնակիչներից կրկին բազմաթիվ ահազանգեր ենք ստացել այս տարվա էտի կազմակերպման աշխատանքների վերաբերյալ: Հասկանում եմ, որ կա մասնագիտական մոտեցում և կա քաղաքացու ոչ մասնագիտական հայացք, սակայն նույնիսկ առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, որ աշխատանքները ոչ այնքան պրոֆեսիոնալ են կազմակերպվել: Ես չեմ ուզում որևէ մեկին դրանում մեղադրել, բայց մի օրինաչափություն, այնուամենայնիվ, նկատել եմ և կցանկանայի առաջարկել բոլոր կազմակերպությունների համար՝ լինեն դրանք համայնքապատկան, թե մասնավոր, հնարավորության դեպքում, կազմակերպել վերապատրաստման դասընթացներ, որպեսզի էտի կազմակերպման գործընթացը լինի բացառապես պրոֆեսիոնալ մակարդակի վրա և ճիշտ կատարվի:

Ըստ իս աշխատանքը չպետք է կատարվի հանուն աշխատանքի, այլ արված աշխատանքը պետք է ծառայի նպատակին:

Հայկ Մարության

-Հարցին կպատասխանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետ Խաչիկ Հակոբյանը:

Խաչիկ Հակոբյան

-Շնորհակալությու՛ն հարցի համար, նշեմ, որ մարտի 1-ին քաղաքապետարան էին հրավիրվել բոլոր վարչական շրջաններն սպասարկող կանաչապատման ընկերությունների գլխավոր գյուղատնտեսները և ընկերությունների տնօրենները: Երեք մասնագետ է հրավիրվել՝ երկուսն Ագրարային համալսարանից և մեկը Գիտությունների ազգային ակադեմիայի բուսաբանության ինստիտուտից: Վարչության կողմից սկզբունքները մանրամասն ներկայացվել են, իսկ մասնագիտական նրբությունները՝ գիտական կազմակերպությունների ներկայացուցիչների կողմից:

Գարնանային էտի ժամանակ աննախադեպ քանակի իրական էտման աշխատանքներ են կատարվել: Աշխատանքների մեկնարկը տրվել են մարտի 4-ին, ավարտը նախատեսված է ապրիլի 25-ին: Այս պահի դրությամբ մայրաքաղաքում 8010 ծառ է էտվել: Մեր գերխնդիրն է, որ էտման աշխատանքները սիստեմավորենք, չնայած՝ տարբեր հասցեներից տարերային շատ ահազանգեր ունեինք, որոնք նույնպես սպասարկել ենք: Քաղաքացիները պետք է տեսնեն, եթե իրենց փողոցի ծառերն էտվեցին 2019թ. գարնանը, իրենց փողոցի հերթը գալու է 2022թ. գարնանային էտման աշխատանքների ժամանակ: Ընթացքում միմիայն արտակարգ իրավիճակների դեպքում կիրականացվեն էտման աշխատանքներ:

Խոր էտի հետ կապված տարբեր խնդրանքներ ենք ունեցել, սակայն թույլ չենք տվել: Էտման են ենթարկվել միմիայն թեղի ծառատեսակները և վթարային բարդիները: Քաղաքում, ցավոք սրտի, ունեցել ենք մի քանի դժբախտ պատահարներ, բարեբախտաբար առանց զոհերի, որոնք ավարտվել են զուտ ծառերի թեքվելով, անկումով և տապալվելով: Մասնավորապես՝ Մյասնիկյան պողոտայում գիշերը ժամը 2-ին ունեցել ենք խոշոր՝ մոտավորապես, 25-մետրանոց բարդու տապալում: Այո՛, չենք կարող այդ բարդիները խոր էտի չենթարկել: Խնդիրը պայմանավորված է նրանով, որ երկու ծառատեսակները տնկված են 50+ ժամանակագրությամբ, նրանց տարիքը 60-100 տարի է, քաղաքային աղտոտման պայմաններում, որպես կանոն, 30-40%-ով նրանց տարիքը կրճատվում է:

Պարո՛ն քաղաքապետ, կարող եմ պաշտոնապես հայտարարել, քաղաքացիների հիմնական մտավախությունը եղել է Բարեկամությունից մինչև Հաղթանակի կամուրջ հատվածը՝ Կիևյան փողոցը և՛ էտից առաջ, և՛ երեկ՝ էտման ավարտի ընթացքում, բոլոր ծառերը հատ-հատ վարչական շրջանի ղեկավարի և մասնագետի հետ ուսումնասիրել ենք: Մայրաքաղաքում նման էտ չենք ունեցել, էտման ենթարկված հիմնական ծառերը 8-12 մետրի

վրա են, մոտավորապես՝ 7 ծառ խոր էտման են ենթարկվել 2,5-3 մետրի վրա: Տեղում ուսումնասիրելով հասկացանք, որ դրանք փտած, ոչ կենսունակ ծառեր են և հին սովորության համաձայն՝ մարդիկ վախեցել են այդ ծառերը հեռացնել, ուղղակի կարճացրել, այդպես թողել են: Հենց տեղում որոշում ենք կայացրել և անմիջապես ցուցում ենք տվել այդ ծառերը հեռացնել և փոխարինել նոր տնկիներով: Խնդրում եմ մեր հանրությունը լինի հանգիստ, ոչ մի ծառի նկատմամբ պատահական կամ կաբինետային որոշում չի կայացվում, յուրաքանչյուր ծառ տեղատեսության և մասնագիտական եզրակացության է ենթարկվում, նոր իրականացվում է էտում կամ էտման աշխատանք: Շնորհակալությու՛ն:

Սուրեն Էյրամջյան

-Շնորհակալությու՛ն, իրականում, երբ ասում էի վերապատրաստում, իհարկե, ինչ խոսք, ղեկավար կազմը վերապատրաստելը շատ կարևոր է, բայց այնուամենայնիվ, իմ խորին համոզմամբ, բուն աշխատանքն իրականացնող մարդկանց հետ ևս պետք է ուսուցողական որոշակի աշխատանքներ տանել: Շնորհակալությու՛ն:

Հայկ Մարության

-Շնորհակալությու՛ն, պարոն Էյրամջյան:

Ավարտվեց հարց ու պատասխանը, ավագանու հարգելի՛ անդամներ, Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստը հայտարարում եմ փակված:

Շնորհակալությու՛ն, ցտեսություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Հ.ՄԱՐՈՒԹՅԱՆ**

Կազմեց՝ Անի Եփրիկյան